

6847
6848
6849
6850
6851.

9(47.925)

9-42

ՀԱՅԵՐԻ ԱԶԱՏՎԲԵԿԱՆ ՂԱՐԺՈՒՄՆԵՐԸ ժ արուս

կ ա մ

- ա) ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ԵՐԿՐՈՐԴ ՇՐՋԱՆԻ
բ) ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ԵՐՐՈՐԴ ՇՐՋԱՆԻ

գ ր ե զ

Խ Ա, Բ Շ Ե ա, Բ ա հ, Գ Ե Ա, Ա Մ Ե Ա, Ե Յ

ՅՈՒՂԻՏ ՀԱՅ ԳԱԼՐԱԿԱՆԵՐԻ

Протоіерей Егишэ Гегамянцъ. Освободительное движение армянъ въ XVIII стол.
Перепеч. изъ журнала „Овітъ“

Գին է 60 կղ.

այլ և այլ

Բ Ա Գ Ա Բ

Էլեկտր.-տպարան Ն. Ա. Երևանցեանի
Էлектро-тип. Н. А. Эриванцова, Баку.

1915

ՀԱՅԵՐԻ ԱԶԱՏԱԴՐԱԿԱՆ ՃԱՐԺՈՒՄՆԵՐԸ
ՃԸ ԴԵՐՈՒՄ

(ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ԵՐԿՐՈՐԴ ՇՐՋԱՆԸ)

(Վարելի 26-ին Բագուի գրական-գեղարմատական ակումբի
հայկական բաժնում կարդացած դասախոսութիւն):

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ԵՐԿՐՈՐԴ ՇՐՋԱՆԸ

Ա.

Նախընթաց բանախօսութեամբ*) մենք տեսնք, որ եւրոպայում առաջին անգամ հայկական հարցը բարձրացրեց Օրին Ժէ դարի վերջերում: Եւ թէպէտ նա՝ առանց իր աշխատութեան հետևանքը տեսնելու, մեռաւ: Բայց նրա զարթեցրած հարցը չմեռաւ, այլ հետզհետէ արծարծւելով և զարգանալով՝ հասաւ մինչև մեր օրերը: Եւ այժմ, սկսեալ ԺԹ դարի վերջերից, հայկական հարցին ջատագով և պաշտպան են հանդիսացել ոչ թէ անհատական անձինք, որպիսիք էին Օրին և նրա անընդմիջական յաջորդները, — այլ ամբողջ և կազմակերպւած քաղաքական կուսակցութիւններ — Հնչակեաններն ու Դաշնակցականները:

*) „Խորայէլ Օրին և իր քաղաքական ծրագիրը“:

29 MAR 2013

— 2 —

Հայկական հարցը իր աւելի քան 200 տար-
ւայ գոյութեան ընթացքումը Եւրոպայում ունե-
ցել է վեց շրջան, որոնցից իւրաքանչիւրը ևս
ունեցել է և ունի իր գրականութիւնը և իր
փաստաթղթերը:

Դրանցից օգտւելով՝ ես իմ բանախօսու-
թիւններին նիւթ եմ վերցրել այդ շրջանները:

Հայկական հարցի առաջին շրջանը սկսում
է Օրիի օրով. Մենք այդ շրջանին հետ արդէն
ծանօթ ենք: Երկրորդ շրջանը կազմում են Օրիի
անընդմիջական յաջորդները, — Տիգրանեան Մի-
նաս վարդապետը, Դաւիթ-բէզը և Էմին Յովսէ-
ֆեանը: Հէնց այս շրջանի մասին է լինելու իմ
այսօրւայ բանախօսութիւնը:

Հաւատարիմ մնալով իմ ուղղութեանը՝ ես
ձեր առաջ կդնեմ, պարոնայք և տիկնայք, սոսկ
պատմութիւնը, չոր ու ցամաք փաստերը և եթ,
առանց որևէ խորհրդածութեան կամ այս ու այն
դրական կամ բացասական կարծիքի իմ կողմից:

Վերջին փորձը կարելի կլինի անել այն ժա-
մանակ եեթ, երբ մենք կծանօթանանք բոլոր
շրջանների պատմութեանը և անցուդարձի հետ:

Եւ այն ժամանակ, այն, միմիայն այն ժա-
մանակ կարելի կլինի արդարութեամբ և անհ-
շառութեամբ գնահատել այն քաղաքական ժա-
ռանգութիւնը, որ մեզ աւանդել են մեր քաղա-
քական գործիչները յընթացս երկու ամբողջ դարի:

Այժմ թոյլ տւէք ինձ, պարոնայք և տիկ-
նայք, դառնալ իմ նիւթին:

— 3 —

Բ

Իսրայէլ Օրիի գործունէութեան հետ ծա-
նօթանալիս մենք տեսանք, որ 1699 թւականում
Անգեղակոթ վիւղաքաղաքում կայացած մելիք-
ների ժողովի որոշմամբ՝ Օրիի հետ միասին, իբ-
րև նրա ընկեր, Եւրոպա մեկնեցաւ Խաչենի Ս.
Յակոբայ վանքի վանահալր Մինաս վարդապետ
Տիգրաննեանը:

Երբ Օրին Աւստրիոյ Լէօպոլդ կայսեր խոր-
հրդով Ռուսաստան եկաւ, հետև բերեց նաև Մի-
նաս վարդապետին, որի հետ և ապրում էր նաև
Սմոլենսկում և ապա Մոսկուայում՝ կառավա-
րութեան յատկացրած կացարանում:

Իսկ երբ Օրին իր շքախմբով Պարսկաստան
ուղևարւեցաւ՝ Մինաս վարդապետին թողեց Մոս-
կուայում և հետը շարունակ գրագրութիւն էր
էր անում թէ ճանապարհից և թէ Պարսկաստա-
նից:

Այսպիսով Մինաս վարդապետ Տիգրաննեանը՝
սկզբից մինչև վերջը՝ շատ լաւ ծանօթ էր Օրիի
գործունէութեան անցուդարձի հետ: Եւ նրա
մահւանից յետոյ Մոսկուայում մնալով՝ ձեռնար-
կեց նրա քաղաքական գործունէութիւնը շարու-
նակելու:

գ.

1714 թ. նոյեմբերի 20-ին Մինաս վարդը ոռւսաց ալքունիքին մի գեկուցազիր ներկայացրեց բաղկացած վեց պարբերութիւնից։ Այդ գեկուցազրով յիշեցնելով ոռւսաց կառավարութեան Օրիի գեսպանութեան զաղտնի և բուն նպատակը, որ էր պարսկահայերին Ռուսիոյ հովանաւորութեան տակ մՏցնելը (կամ որ նոյն է՝ ապստամբեցնելը), Մինաս վարդապետը աւելացնում է, որ յիշեալ նպատակը գլուխ բերելն այնքան էլ դժւար գործ չէ. և ինքը յանձն է առնում այդ բանը։

Կասպից ծովի պարսկական ափում, — զըռում է վարդապետը, — մի նաւահանգիստ կայ — Նիազօվօ (կամ աւելի ճիշտը՝ Նիզօվօ), որտեղ բաւականին հայ կայ։

Եթէ կառավարութիւնը յօժարի, իր հաշւով հայկական մի վանք շինելու այնուեղ, — ժամանակին այդ վանքը կարող է բերդի պաշտօն կատարել ոռւսաց գօրքի համար։

Եինութեան թոյլտութիւն պարսից կառավարութիւնը հեշտութեամբ կտայ, ինչպէս որ տուել է Պարսկաստանում արդէն շինւած վանքերի համար։

Եինւելիք վանքը առիթ կդառնայ Պարսկաստանից Ռուսիա գնացող և եկող հայ վաճառա-

կաններին և առհասարտկ պարսկահայերին՝ ուխտի յաճախելու այնտեղ։ Եւ հետզհետէ ընդունելով վանահօր առաջարկն ու յորդորները՝ վերջի վերջոյ ընդունել Ռուսիոյ հովանաւորութիւնը։
Երբ արդէն պարսկահայերն Ռուսիոյ հովանաւորութիւնն ընդունեցին պրծան, — այնուհետև ոռւս կառավարութիւնը իր հովանաւորեալներին պաշտպանութեան պատրւակաւ՝ կարող է Նիազօվօյի վանքում հարկաւոր թւով զինւորներ պահել, որոնց ապրուստի հոգացման դիւրութիւնն ևս ցոյց է տալիս Մինաս վարդապետը նկարագրելով տեղւոյն պատղաբերութիւնն ու առատութիւնը։

գ.

Եւ որպէս զի պարսից կառավարութիւնը որեւէ կասկած չունենայ ոռւսաց վրայ, վարդապետի կարծիքով, անհրաժեշտ է, որ վանքի շինութեան համար ոռւս կառավարութիւնը միայնակ չդիմէ շահին, այլ հոռմի պապի, Աւստրիայի կայսեր, Լեհաստանի թագաւորի և Պֆալցի իշխանի հետ միասին*): Եւ վանքը շինուի իբրև թէ հայ կաթոլիկների համար։

Այդպիսի վանքեր, — աւելացնում է Մինաս

*.) Ս. Յակոբայ վանքի վանահայրը մինչև այդ ժամանակ գլխի չէր ընկել որ Պետրոս Մեծի հաշւին ամենևին չէր գալ Եւրոպայի հետ միասին գործել Պարսկաստանում։ Եւ եթէ Օրիի դեսպանութեանը միշաղզային կերպարանք տրւեցաւ. — դա ոռւս կառավարութեան ըռն նպատակը թագցնելու համար էր։

վեր, — վերոյիշեալ վեհապետների խնդրանօք՝
Պարսկաստանում շատ են շինուած:

Մի այլ խորհուրդ էլ է տալիս Պետրոս Մեծին Ա. Յակոբայ վանքի վահաճայրը: Թողող սուսաց կայսրը, — ասում է նա, — իր միջնորդութիւնը եւրոպական վեհապետների առաջ անէ ոչ թէ իրենից, ինքնարերաբար, այլ իբրև ի հետեւումն վարդապետի իրեն միջնորդութեանը: Եւ վանքի շինութեան տեղը Նիազօվո նաւահանգիստը չպէտք է նշանակել սկզբից ևեթ, այլ Շիրվանի (Շամախւոյ) գաւառի միորեէ յարմարաւոր տեղում:

Եւ որպէսզի թէ պարսից կառավարութիւնը, թէ եւրոպական տէրութիւնները և թէ հայ ժողովուրդը համոզվին, որ հայ վարդապետն իր զիմումով ուրիշ նպատակ չունի, այլ իբրև թէ սոսկ ժողովրդի կրօնական պահանջներին բաւարարութիւն տալն՝ Մինաս վարդապետը խնդրում է, որ սուս արքունիքը թոյլատրէ իրեն Պետերբուրգում ևս հայոց եկեղեցի շինել՝ հայ ազգի համակրութիւնն այսպիսով առաւելապէս դէպի ինքը գրաւելու համար:

Այս առաջարկութիւնները կառավարութիւնից ընդունւելու դէպքում՝ Մինաս վեր յանձն էր առնում անձամբ և գրաւորապէս տեսակցել ու բանակցել Հայոց կաթողիկոսների և մելիքների հետ:

b

Վարդապետի այս առաջարկները սուս ար-

քունիքը չընդունեց, այլ վճռեց նրա պատրաստակամ գործունէութիւնը ևս այն շաւզի մէջ դնել, ինչի մէջ որ դրել էր Օրիինը:

Դրա համար 1716 թւի փետրւարի 6-ին մի անցաթուղթ տրւեցաւ վարդապետին Պարսկաստան գնալու, իբրեւ քէ այնտեղ մնացած իր ընկերոց՝ Օրիի գոյցը ձեռի բերելու համար:

Միաժամանակ Պարսկաստանի ոռուսական գեսպանին — Վասիլի Վոլինսկուն հրամանագրւեցաւ հարկ եղած օգնութիւնը հասցնել վարդապետին, բայց այնպիսի ձեռով ու եղանակով, որ պարսից կառավարութիւնը ամենեւին զլիսի չնկնի վարդապետի այնտեղ զնացած լինելու իսկական նպատակի մասին, որ էր, ինչպէս յիշւած է վերեւում, պարսկահայերին Ռուսիոյ հովանաւորութեան տակ մտցնեն:

Վարդապետի բաղդից Վոլինսկին մի անշընորհք մարդ դուրս եկաւ: Եւ բացի այն, որ իր վեհապետի — կայսեր յանձնարարութիւնը՝ վարդապետին օգնելու նկատմամբ՝ չկարողացաւ կատարել, այլ նաև չկարողացաւ Մինաս վարդապետին Օրիի պարտատէրերի ձեռքիցն անգամ ազատել, որոնք նրան բանտարկել տւին Շամախիում, որտեղից նա նոյն տարւայ դեկտեմբերի 15 թւակիր նամակով յայտնելով Պետրոս Մեծին Վոլինսկու անտարբերութիւնը դէպի ինքը, — աղաջում, պազատում էր կայսեր, որ բարեհաճի որևէ կարդագրութիւն անել իր ազատութեան մասին:

Եթէ ես,—զրում է վարդապետը, — Զեր գեսպանի յուսովը չլինէի, հեշտութեամբ զլուխս կարծացնէի սրանց ձեռքից. բայց հիմա բանտի միջից ուրիշ ձար չունիմ:

Բանտարկութիւնը երկու ամիս տևեց. Եւ վարդապետին ազատողն շամախեցի հայերն եղան՝ խանին միջնորդելով:

Զ

Հնթերցողը պէտք է զիտենայ, որ Մինաս վը նախ քան Շամախիում բանտարկւելն՝ արդէն Պետրոս Մեծի հրամանը կատարել պրծել էր:

Նա արդէն տեսնել էր էջմիածնի և Աղւանից կաթողիկոսների և մելիքների հետ և նրանց յօժարեցրել էր ոռւսաց կայսեր հովանաւորութեան տակ մտնելու:

Էջմիածնի կաթողիկոսը իր յօժարութիւնը տւել էր բանաւոր, իսկ Աղւանից կաթողիկոսը՝ Եսային գրաւոր:

1716 թ. օգոստոս 16 թւակիր կոնդակում նկարագրելով մի քանի տարի առաջ՝ երկու եպիսկոպոսներով Օրիի հետ իր Աժգարխան գալն ու վերագառնալը—Եսայի կաթողիկոսը աւելացնում է՝ «իսկ այժմ կրկին առաջնալ ի մեծէ քագաւորութենէդ եղբայրս մեր զՄինաս վարդապետու, որ յազգէ մերմէ՝ եկն ենաս յերկիրս մեր և առ մեզ. և զբարի և Աստուածահաճոյ

կամֆ և խորհուրդ յաջազօր քագաւորութեամդ ծանոյց մեզ. և մեր լսելով զւարձացաք և ցընծացաք ի հոգի և ի մարմին, և յօժար սրտիւ կամիմֆ ընդ հովանեաւ թեւոց յոց լինելու:

«...Մեք պատրաստ եմք ընդ առաջ քո ըստ իմում կաթողութեանս, և մեր նահանջիս մեջինովից մեծամեծովից և փոխումբի և յօժամ կամեսցի հզօր և մեծ թագաւորութիւնդ յաճապարել այսր»:

Է

Աղւանից կաթողիկոսի այս կոնդակը 1717 թ. մարտի 14-ին պետական կանցլեր Պետր Շափիրովին յանձնելով՝ Մինաս վը բերանացի մի ընդարձակ զեկուցում ևս արաւ նրան իր ճանապարհորդութեան մասին։ Զեկուցումը իսկոյն թարգմանւեցաւ ու արձանագրւեցաւ, որից երեսում է որ Մինաս վարդապետը՝

ա) Պետերբուրգից և Մոսկուայից մեկնելիս՝ նախ և առաջ էջմիածնին է մտել և Աստուածատուր կաթողիկոսին հաղորդել Պետրոս Մեծի ցանկութիւնը։ Կաթողիկոսը բանաւորագէս յայտնել է, որ ինքը հակառակ չէ ոռւսաց հովանաւորութեան տակ մտնելուն։ Սակայն այդ առթիւ գրաւոր գիմում անելն աւելորդ է համարում։ Եթէ ոռւսաց զօրքը Պարսկաստան եկաւ, կաթողիկոսը ձեռքից եկած օգնութիւնը չի խնայիլ նրանցից։

Մինաս վ-ը չբաւականանալով այդքանով
աղաչել թախանձել է կաթողիկոսին, որ գոնէ իր
այդ խօսքերն գրաւոր յայտնէ և տեղեկութիւն
ռուսաց կայսեր:

Զիջանելով վարդապետի թախանձանքին՝
կաթողիկոսը նրան մի մասնաւոր նամակ է տա-
լիս այս իմաստով թէ՝ վարդապետը ներկայացել
է իրեն և զանազան գործերի մասին պատմու-
թիւններ է արել, որոնց նա—կաթողիկոսը հա-
ճութեամբ լսել է:

բ) Այդ նամակը ձեռին էջմիածինից Մինաս
վարդապետը գնացել է Գանձասար և Եսայի կա-
թողիկոսի վերեւում յիշւած կոնդակն է սաացել՝
Մինոյն ժամանակ ինքն էլ Եսայի կաթողիկո-
սից եպիսկոպոս ձեռնադրւելով և արքութիւն
ատանալով՝ բոլոր ռուսահայերի վրայ առաջնորդ
է կարգւել:

Ը

Կայսեր անունով կոնդակ տալուց և Մինաս
վ-ին եպիսկոպոսացնելուց և առաջնորդ կարգե-
լուց յետոյ միայն՝ Աղւանից կաթողիկոսը մտա-
ծեց թէ մի գուցէ, որ ինքը խարւած է և Մի-
նաս վ-ը ինչ որ խոսում է, թերեւ իրենից է
խօսում, այլ ոչ ռուսաց արքունիքի կողմից,
որից մի կտոր, մի փշուր թուղթ անզամ չու-
նէր Մինաս վ-ը իր ձեռքին:*)

*) Հաւանական է, որ Եսայի կաթողիկոսը այս

Այս տարածայնութիւնը պարզելու համար
որոշեցաւ, որ նորընծայ եպիսկոպոսի հետ ձա-
մախի գնան մի եպիսկոպոս և մի յայտնի աշ-
խարհական՝ և այստեղ գանւող ռուսական գես-
պան Վոլենսկուց ստուգեն, թէ ճիշտ է արդեօք,
որ Մինաս վ-ը ռուսաց կայսեր կողմից և նրա
յանձնարարութեամբն ու հրահանգովն է եկել
Պարսկաստան:

Յիշեալ անձինք հասան Շամախի: Սակայն
դեսպանը ոչ նրանց ընդունեց և ոչ էլ մինչև
անգամ Մինաս վարդապետին:

Այս բանը շատ վատ տպաւորութիւն թողեց
կաթողիկոսի մարդկանց վրայ, որոնք և շատ
դժգոհ մնացին վարդապետից: Վերջինս ամեն
կերպ աշխատեցաւ համոզել նրանց, որ դեսպա-
նի վարմունքն անշուշտ հետևանք է անձնական
թշնամութեան, կամ գուցէ իր ծանօթներից մէ-
կի բանսարկութեան: Եւ խոստացաւ, որ Մոսկ-
ւա համելիս՝ նա ուղղակի կայսեր կողմից հրո-
վարտակ կուղարկէ Աղւանից կաթողիկոսին՝ նրա
միամտութեանը համար:*)

Կորակացութեան եկաւ էջմիածնի կաթողիկոսի՝ Մի-
նաս վ-ին տաճ պատասխանը լսելուց յետոյ: Բայց
հաւանական է, որ վ-ը էջմիածնի զնալը թագցրած էլ
լինէր Եսայուց:

*) Դեսպանը վարեցաւ իրեն ստացած հրահանգի
համաձայն: Մինաս վարդին և Աղւանից կաթողիկոսի
պատգամաւորներին նա չնդունեց պարսից կառավա-
րութեանը կասկած չտալու համար՝ որ ինքը դրանց
հետ որևէ յարաբերութիւն կամ կապ ունի:

դ) Անցնելով տեղագրական հարցերին՝ Մինաս վ-ը իր զեկուցագրում յայտնում է մանրամասնաբար թէ Շամախին, Էջմիածինը և Գանձասարը Նիազօվօ նաւահանգստից որքան հեռաւորութիւն ունին:

Զամախուց մինչև Գանձասար, աւելացնում է վ-ը, շատ զիւղեր կան՝ ամեն մէկը 50-ից մինչև 100 տուն ժողովրդով։ Հողը արգաւանդ է։ Գանձասարի կաթողիկոսի իրաւասութեան ներքոյ 900 մեծ զիւղեր կան՝ ամեն մէկը 100-ից մինչև 200, 300, 400 և աւելի տուն ունեցող բնակիչներով։

Էջմիածնի կաթողիկոսութեան տակ գտնւած զիւղերն աւելի մեծ են և բազմաթիւ։ Բայց նրանց ճիշտ թիւը վարդապետը չգիտէ։

դ) Շրջելով Դարբանդում, Շամախում, Գանձակում, Երևանում, Թաւրիզում և Արտաւիլում՝ Մինաս վ-ը այդ քաղաքներում հանդիպել է բազմաթիւ մահմեդականութիւն ընդունած իմերէթցիների, որոնք ուրախութեամբ իրենց քրիստոնէական կրօնին կվերադառնան և առանց ընդդմութեան անձնատուր կլինին ուստաց բանակին, երբ նա երևան գայ այն կողմերում։

Գալով այդ քաղաքների դիրքին, — վարդապետը նրանց գտել է ոչ ամուր, շինութիւնները՝ շատ հինգիսկական պահակ զինուորների և թնդանօթների թիւը՝ սակաւ։

թ

Մինչ այս մինչ այն՝ Պարսկաստանում ներքուստ շփոթութիւններ, իսկ արտաքուստ յարձակմունքներ ըսկաւեցան և շահերի փոփխութիւն տեղի ունեցաւ։

Այս ամենի մասին Աղւանից կաթողիկոսը պարբերաբար տեղեկագրում էր Մինաս վ-ին, իսկ սա էլ զեկուցանում էր սուսաց արքունիքին։

Պարսկաստանի այդ շփոթութիւնների մէջ որոշ զեր խաղացել էր և ինքը Մինաս վ-ը՝ իրեն հաւատարիմ մի հայի ձեռքով լեռնական ժողովրդին՝ լէզգիներին զրգուելով պարսից դէմ և սրանց հաւատարիմ գործակիցներին՝ ուսւ կառավարութեան միջոցով՝ խիստ հսկողութեան ենթարկելով, որպէս զի վարդապետի այդ մասնակցութիւնը հակապարսկական շարժումներին՝ Պարսկաստանում չլաւի և չտարածւի։

Հէնց այդ նպատակի համար էլ Աժդարխանի նահանգապետին հրահանդ ուղարկւեցաւ Պետերբուրգից. «Բանալ և կարդալ Աժդարխանից Պարսկաստան ուղարկւած բոլոր նամակները՝ թէ հայերինը և թէ այլ ազգերինը։ Ոչ մի հայի և ոչ որևէ այլ ազգի թոյլ չտալ ալդաեղից (Աժդարխանից) Պարսկաստան գնալու։ Հարկաւոր դէպքում նոյնիսկ ձերբակալել այգափիսիներին, միայն թէ այնպիսի եղանակով, որ զլիի չնկնեն իրենց ձերբակալման բուն պատճառի ինչ լինելը»։

Պարսկաստանի ներքին և արտաքին շփոթութիւնների մասին՝ կաթողիկոսից և մելիքներից ստացած բոթաբեր տեղեկութիւնները ոռուս արքունիքին հաղորդելով՝ Մինաս վ.ը աւելացնում էր, որ արդէն ժամանակն է ոռուս բանակը Պարսկաստանի վրայ շարժելու:

Մինոյն խորհուրդը կառավարութեանը տալիս էր նաև Աժգարխանի նահանգապետը զրելով թէ՛ եկաւ, հասաւ զէնքով գործելու ժամանակը: Իսկ զէնքով գործելու առիթն այն էր, որ 1721 թւին լեռնականների մի հերոսակախումբը, ի հետևումն Մինաս վ.ի գործունէութեան յարձակւելով Շամախու վրայ, ի միջի այլոց, կողոպտել էր նաև միքանի ոռուս վաճառականների գուքաններն, 500,000 սուբլու վնաս պատճառելով նրանց:

Այս գէպքը կայսեր հաղորդելով՝ Աժգարխանի նահանգապետը աւելացնում էր՝ «իմ խոնարհ կարծիքով, սրանից էլ աւելի օրինաւոր և յարմար առիթ չէ կարող լինել պատերազմ յայտարարելու համար: Դրանով նախ մենք մեր հպատակների շահերը պաշտպանած կլինենք: Եւ երկրորդ՝ պատերազմը պարսից դէմ յայտարարած չենք լինիլ, այլ նրանց և մեր թշնամի լեռնականների»:

Ժ

Աժգարխանի նահանգապետի սոյն տեղեկա-

դիրն ստացւելիս՝ Պետրոս Մեծը հրամայեց, որ զօրքերի մի մասը պատրաստի գարնանը Աժգարխան մեկնելու:

Իր այս կարգադրութիւնը նահանգապետին ծանուցանելով՝ կայսրը պատւիրում էր նրան այժմեանից հեթ ազգարարել հայերին և վրաց Վախտանգ իշխանին, որ կազմ և պատրաստ լինին՝ գարնանը ոռուս բանակին միանալու:

«Բայց մինչև մեր զօրքի ժամանելն, — շեշտում է կայսրը, — նրանք որևէ գործի չձեռնարկեն, որպիսի յանդղնուրեան առհասարակ սովոր են այդ ազգերը. այլ սպասեն և շարժեն մեր խորհրդի համեմատ»:

Թէ՛ այսպէս զըսւմ էր Պետրոս Մեծը, որ արդէն անձամբ Աժգարխան էր հասել. բայց միևնուն ժամանակ բանաւոր հրահանգ էր ուղարկում և յորդորում Վախտանգին՝ հէնց այժմ յարձակւել լեզզիների վրայ:

Եւ ի կատարումն կայսեր այդ բանաւոր ազգարարութեան՝ Վախտանգն ու նրա հետ եղող Եսայի կաթողիկոսը՝ իրենց ժողոված 30,000 զօրքով յարձակւեցան լեզզիներին վրայ և նրանց ցրւելով զօրքին իրաւունք տվին տեղական մահմեդականներին կողոպտելու առանց քրիստոնէից և նրանց կայիցը ձեռք տալու:

Դժբաղդաբար Վախտանգի զինւորները նրա պատւէրը չկատարեցին: Եւ մինչև Թարթառ գետըն ընկած տարածութիւնում եղած զիւղերի վրայ յարձակւելով՝ սոսկալի վնասներ հասցըին

ոչ միայն մահմելականներին այլ նաև հայերին, որոնց կողոպուտները սայլերով փոխադրում էին իրենց բանակատեղին:

«Վախտանգի զինւորները երբ մօտենում էին հայկական զիւղերին, — գրում է ականատես վկայ Եսայի կաթողիկոսը, — բնակիչները դիմաւորում էին նրանց իրենց հոգեսրականներով, խաչ ու խաչքառով և զանգահարութեամբ։ Սակայն վրացիները իսկոյն յարձակւելով խլում, վերցնում էին նաև եկեղեցիների զգեստներն, սրբութիւններն ու անօթները։ Այսպիսով լեզգիներից մնացածը, — ասում է նոյն պատմիչը, — ագահ, անկուշտ և անգութ վրացիներն էին խլում հայերից։ Ահա թէ մենք՝ հայերս ինչ օգուտ ունեցանք Վախտանգի գալուց։ Թէպէտ նա ինքը բարի, երկիւղած և ջերմեանդ մարդ է, բայց կոպիտ ու խեռ վրացիները նրան չեն հնազանդում»։

ԺԱ

Լեռնականներին ցըւելուց յետոյ՝ Վախտանգը Եսայի կաթողիկոսի հետ վերագրածաւ թիֆիզ, Եւ սկսեցին նորանոր պատրաստութիւններ տեսնել ուռւսական բանակին միանալու համար։ Այդ միջոցին Եսային գնաց Ղարաբաղ և 10,600 հայ զինւորներ ժողովելով՝ նրանց հետ եկաւ նորից թիֆիզ, ուր վրացիք մեծ խանգավորութեամբ դիմաւորեցին և ընդունեցին նրանց։

Այսպիսով վրացի և հայ զինւորներից կազմւցաւ 40 հազարանոց մի բանակ։ Վախտանգն ու Եսային մեծ յրց ունէին, որ այդ թիւը իսկոյն կը կընապատկւի, երբ ուռւսական բանակը պարսկական սահմանը մտնի, դէպի որը արդէն սկսել էր շարժիլ։

Յուլիսի 19-ին ուռւսական փոքրիկ նաւատորմը կասպից ծովը մտաւ, իսկ հեծեալ և հետեակ զօրքը՝ ցամաքով էին առաջ գալիս։

Օգոստոսի 23-ին ուռւսները Դարբանդին

~~Հ~~ամիրեցին Պետրոս Մեծի իրեն առաջնորդութեամբ։ Նրա հետն էր Մինաս վարդապետը, Կայսրը մտազիր էր Դարբանդից ճամբայ ընկնել դէպի Շամախի, որպէս զի միանայ Գանձակի տակ իրեն սպասող վրացի և հայ զօրաբանակին Վախտանգ իշխանի և Եսայի կաթողիկոսի առաջնորդութեամբ։ Իսկ մինչ այդ կայսրը կանգ առաւ Դարբանդում մինչև զօրքի պաշարի հասնելն իր եսկից։

Դժբաղդաբար պաշարը Դարբանդ չհասաւ։ Կասպից ծովը ալեկոծւեց, որին ուռւսական խախուտ նաւերը չգիմանալով՝ խորտակւեցան և ընկղմւեցան։

Միւս կողմից՝ խոտի և դարմանի պակասութեան պատճառաւ հեծելազօրքի ձիանքն ևս սկսեցին սատկել։

Այսպիսով Պետրոս Մեծը ստիպւած եղաւ յետ դառնալ Աժգարխան։

ԺԲ

Ոռւսաց կայսեր յետ դառնալը սովորափեցրեց քրիստոնեաներին և, ընդհակառակը, հըրձւեցրեց մահմեդականներին:

Հայերը փախան, ամրացան Դարաբաղի իրենց լեռներն ու քարանձաւները, իսկ վրացիք՝ Թիֆլիզ:

Սակայն տաճիկները,* պարսիկներն ու լեզգիները ամեն կողմից շրջապատեցին փախչողներին:

Վախտանգը Թիֆլիզից խոյս տւեց և Մոսկվա գնալով ոռւսներին ապաւինեցաւ իր որդու և եղբօր հետ։ Իսկ հայերը սկսեցին կռւել իրենց դիրքերից՝ իրենց շրջապատող մահմեդականների հետ։ Եւ ոչ մի պայմանով չէին յօժարում անձնատուր լինել, միշտ յուսալով, որ ոռւսաց կայսը, ըստ իր խոստուման, շուտով կվերադառնայ։

Դժբաղգաբար թէ կայսերական խոստումը ուշացաւ և թէ կռւող հայերի հրանիւթը վերջացաւ։ Եւ այդ միջոցին էր ահա, որ մահմեդականները սարսափելի կերպով կոտորել սկսեցին հայերին։

Հաղբատի առաջնորդդ Մինաս Եպիսկոպոս Փէրվագեանը՝ իրու ականատես՝ ահա ինչպէս է նկարագրում այն կողմի հայերի կոտորածը իր

*) Այդ միջոցին Օսմանիան կառավարութիւնը և արժւել էր ի պաշտպանութիւն պարսից։

մի նամակում ուղղած Մինաս վարդապետ Տիգրանեանին։

ԺԳ

«Յայժմուս մնացինք մեր խեղճ ազգովն որպէս բեկեալ նաւ ի մէջ ծովու, այլ ոչ ունիմք յոյս և ապաւէն յումեքէ, նախ և Աստուած եմք յուսացել և ապա առ թագաւորդ (Մեծն Պետրոս), ևս առաւել քո եղբայրութիւնդ։ ով վարդապետ, մին ճար արէք Աստուծոյ խաթրի և ի ոէր խաչեցելոյն Քրիստոսի. շուտով և փութով զթագաւորն Շամախի հասուր։ Միայն նրա անունն լինի և ոտի տեղն հասնի ՃՌ (100,000) հայ զինուրք առ ոսու նրա կուգամք, և թէ յետոյ մինչ մարտի ամիսն եկիք ոչ, զմեր ազգն բնաջինջ կանեն՝ և զկուսաւորչի հաւատն պաթալ կանեն, ձեր աշխատանքն ալ փուչ կու դառնայ, մեր տշխատանքն ալ յունայն կու դառնայ։»

Հաղբատի առաջնորդից աւելի աղետալին և մանրամասն են նկարագրում իրենց ժողովրդի վիճակը Դարաբաղի չորս մելիքներն՝ Պետրոս Մեծին ուղղած իրենց մի թղթում. «մարդիկն ամենն սրախողիսող առնէին, կանայք, երախայք, ախջկունքն ամենն քշելով տանէին գէպի Դաղսան։ Ետուստ (հտելից) սուր, առաջուստ կուր գետը. որը կամին մտաներ, որն ձիոց ազին բռնելով, որը թափուէր երեսս ջրոյն, ջուրն արիւնախառն, երեխայքն ամենն թափելով գետն տանէր որպէս

հեղեղ գարնանալին. ևս յորժամ անցուցանէին այն կողմն եսիրքն (գերիներն) ամենն բաժին-բաժին առնէին լէզգիքն այս խղճուկ քրիստոնեայքս, կանայք, երեխայք, աղջկունքն. մայրն մէկ լէզգու բաժին անկանէր, տղան մէկ ուրիշ լէզգու բաժին անկանէր, աղջիկն մէկին բաժին անկանէր. յորժամ միմեանց բաժանէին՝ մայրն յորդւայն բաժանէին, աղջիկն ի մօրէն, միմիեանց գիրկս արկանելով՝ սուգ, աղաղակ բառնալով կոչեցուցանէին, ոչ տեսանէ աչս մարդոց և ականջս ոչ լսէ ձայն արտառւալից ոգոյնք և այլն:

ԺԴ

ՄԵԼԻՔՆԵՐԻց էլ աւելի ոէլիէֆ կերպով նկարագրում է հայերի վիճակը լէզգիների ձեռքից՝ մի վարդապետ Մարտիրոս անունով՝ Վախտանգ իշխանին և նրա Շահնավագ որդւոյն ուղղած մի ընդարձակ նամակում:

Մարտիրոս վարդապետը՝ Ղուբայի վիճակը 12 հայկական գիւղերի գործակալը պէտք է որ եղած լինի:

«ԺԲ» (12) գիւղ եմք. այդ գիւղերում տաւար, ձի, գոմէշ չի մնացել, շորեղէն, պղնձեղէն, արծաթեղէն, արկաթեղէն չի մնացել. մեր և օղլուշաղի կեցէն (հագած) շոր հանել են. մեր օղլուշաղն մեր ձեռքէն առել են, գիշեր ու ցերեկ իւրեանց մօտէ, ասում են թէ մենք գնալիս կուտանքնը. գարի, գարման, ցորեն, բրինձ, չալթուք

չի մնացել, մեր տներ փուլ են ածել, մեր եկեղեցիք այրել՝ թովլայ (ախոռ) են շինել: էլ մեզանում սիրաթ չի մնացել. էլ մին իքմին (ոչ ոք) չէ մնացել, որ մին փող աժենայ. գիւղագլուխ ԺԵ (15) թուման ԱՌԴՆ (1400) փող են առել. տուն գլուխ Ժ (10) ղօնաղ ԺԵ, Ի, Խ մինչի Ծ (15, 20, 30, 40, 50) ձիաւոր կայ: Այս ձիաւորի իրենց ղոնաղից առածը միայն Աստուած գիտէ որչափ փող են առել. էրեցների մորուաներն ողջ հանել են. մարդկանց վրայ կարմիր միս չի մնացել, շատ թակել են, անտուն ու անձար ենք մնացել...: Մեր աչքի գիւղաց մեր օղլուշաղի գլուխն ինչ ասես բերում են, զմեղ կապում են, ոմանք մարդիք զմեղ են թակում, միքանի մարդիք հաւաքւում են, մեր աչաց առջե մեր կանանց և մեր աղջկերանց հետ խանակում են. էլ իւրեանք իւրեանց ասում են մէկզմէկին, թէ կեաւուրին չարչարանք տալը վարձք է... Մեքբերանով որն ասենք որն մնայ: Մեր գլխով եկածն՝ լեզով չի լինի պատմել»:

ԺԵ

Միւնոյն բովանդակութեամբ՝ Նուխի քաղաքի հայերն էլ Պետրոս Մեծին մի աղերսագիր ուղարկեցին, որի մեջ նկարագրելով տաճիկ զօրքի առաջխաղացումն և միմեանց ետեկց այս այն քաղաքին տիրելն՝ իրենց գրութեան մասին աւելացնում են՝ «մեր գիր ու գրեանքն և

Եկեղեցիքն այլեցին, մեր քահանայքն կոտորեցին, շատ մարդ վասն հաւատոյ խաթըռու ոռութեավ գնացին. հիմայ ցերեկն թրքութիւն ենք անում, գիշերն հայութիւն, այլ ճար չունիմք. մեր ճարն հրամանքդ ես. մեր խնդիրն այս է, որ ի սէրն Քրիստոսի, մեղ մէկ փրկութիւն հասուցանես, զօշուն ուղարկես Շամախին առնէ, համ մէնք աղաւեինք, համ Սղնախն».

ԺԶ

Միենոյն բովանդակութեամբ Պետրոս Մեծին մի թուղթ գրեց և օգնութիւն խնդրեց նաև Գոնձասարի Ներսէս կաթողիկոսը:

Իսկ ինչ վերաբերում է Մինաս վարդապետ Տիգրանեանին, — նա ևս ոչ թէ մի անգամ, այլ միքանի անգամ միենոյն խմաստով գիմումներ արաւ թէ ուղղակի կայսեր և թէ նրա աւագանոյն:*)

*) Ծանօթ.—Մինաս վարդապետի յանձնարարութեամբ՝ այս ժամանակի անցքերը նկարագրած ունի նաև պարսկաստանցի Դը Մարգիս Գիլանենց անունով մի հարուստ հայ, որ իր ամբողջ հարստութիւնը և նոյնիսկ իր կեանքը զոհ բերեց իր ազգի ազատագրութեան գործին. նա իր հաշւով մի ամբողջ «հայկական էսկադրօն» էր պահում սահմանագլխում: Գիլանենցի այն նկարագրութիւնը կամ «յիշատակարանը» 1863 թ. տպւեցաւ «Կոռոնկ» ամսագրում, որից պրօֆ. Պատկանանը 1870 թւին թարգմանեց ոռուսերէն, որ և Գիտութեան ճեմարանը հրատարակեց:

Բայց այս ամեն աղերսագրերն ու դիմումներն ոչ մի հետևանք չունեցան և մազի չափ անգամ չաղեցին ոռուս արքունիքի զգաց-

Ականատես Գիլանենցը պատմում է, որ պարսիկ ները հայերի դէմ զայրացած լինելով՝ որ ուսւներին Պարսկաստան հրաւիրեցին և նրանց օգնեցին, — սկսեցին չարաչար կերպով վրէժինդիր լինել կողոպտելով և կոտորելով նրանց: Նոյնպէս վարւում էին նաև տաճիկները և միենոյն պատճառաւ, անխտիր կոտորելով հայերին: — Ինչպէս պարսիկների, նոյնպէս և տաճիկների վրէժինդրութիւնն աւելի բոլորքւեցաւ, երբ հայերը մերժելով նրանց առաջարկութիւնը ձեռք քաշելու ուսւներից, յամառօրէն շարունակում էին իրենց գիմադրութիւնը, մեծայոյս լինելով Պետրոս Մեծի այն խոստման վրայ, որ ինքը շուտով յետ է դառնալու Դարբանդ:

Ուստի կախէթի Մահմադ-Ղուլի խանը՝ իրեն զօրքի հետ միացնելով նաև Երևանից իրեն օգնութիւն ուղարկուած զօրքը, — հայերից 2000 հոգի սպանեց, իսկ գերի վերցրածներին իրենց կողոպուտներով Երևան ուղարկեց ի տնօրինութիւն այնտեղի խանին:

Միւս կողմից՝ տաճիկները և յարձակւեցին հայերի վրայ և կողոպտելով ու քարուքանդ անելով հայկան քաղաքներն ու գիւղերը՝ այնպիսի սարսափ տարածեցին կենդանի մնացած ժողովրդի վրայ, որ ոչ ոք չէր համարձակում տանիցը զուրս գալու: Վերջ է վերջոյ հայերը ստիպւած եղան թողնելով իրենց հայրենիքը խմբովին, ամբողջ գիւղերով, Օսմանեան աշխարհը գաղթել:

Մահմեդականների վրէժինդրութիւնից, — զրում է Գիլանենցը, — աղատ չնացին և էջմիածնեցիր: Եւ կաթողիկոսը՝ ոռուսների հետ ծածկաբար յարաբերութիւն ունենալու պատճառաւ՝ տուգանւեցաւ և բանտ ձգւեց:

մունքի վրայ, որ շարունակում էր իր միամտեցուցիչ թղթերով յուսադրել հայերին մահմեդականներին քաջաբար գիմադրելու յորդորներ կարդալով։ Այդպիսի բովանդակութիւն ունէր և այն հրովարդակը, որ Պետրոս Մեծը, որպէս ի պատասխան իր ստացած թղթերին, ուղղեց պարսկահայերին։ Հրովարտակի վերջում կայսը հրաւէր էր կարդում այս ու այն կողմ փախած հայ վաճառականներին՝ վերադառնալիրենց նախկին վաճառառեղիներն և ձեռնարկելիրենց գործերին՝ համբերաարութեամբ ակնունելով իր վերադարձին։

Կայսերական այս հրովարդակը Պարսկաստանի հայերին ուղարկւեցաւ իվան կարապետանուով մի հայ պաշտօնէի ձեռքով, որ պարսկահայերի մէջ շրջելով թէ՛ մի կողմից խրախուսում և սիրտ էր տալիս նրանց, բայց միւս կողմից էլ չէր ծածկում, որ ոռւսաց զօրքի գալը կարող է ուշանալ։ Ուստի թերևս հայերը ստիպւած են լինելու նորանոր զոհողութիւններ յահնառու լինել։ Իսկ եթէ, — շարունակում էր իվան կարապետը իրեն տւած հրահանգի համեմատ, — եթէ ժողովրդի համար ալես անհնարին է նորանոր զոհողութիւններ անել, — ապա նրանք լաւ կանեն եթէ յանձն առնեն գաղթելու ոռւսների ձեռքն անցած Դարբանդ, Գիլան և այլ քաղաքներ, ուր կայսեր կողմից նրանց յատուկ դիւրութիւններ և առանձին արտօնութիւններ կտրուին անշուշտ։

ԺԷ

Որքան էլ որ իվան կարապետը աշխատում էր գաղթելու համար իր արած առաջարկութեամբ հայերին չխրանացնել, — այնուամենանիւ նրան լոողների մտքերում արդէն կասկած ծագեցաւ նրա բարեմտութեան կամ անկեղծութեան մասին։ Բայց որովհետեւ գաղթելու առաջարկի մասին կայսեր հրովարտակում ոչինչ առւած չէր, — ուստի կաթողիկոսն ու մելիքներն այնպէս կարծեցին, իբրև թէ գաղթելու առաջարկը իվան կարապետի իրենից է բղխում, — ուստի և վեր կացան և նորից դիմումներ արին կայսեր, որին զրում էին թէ՛ չնայած նորին Մեծութեան քանիցս անգամ իրենց տւած խոստմանը՝ մինչ օրս ոչ մի օգնութիւն չհասաւ իրենց՝ ուուսների կողմից։ Թէ՛ մահմեդականները կայսեր հետ իրենց ունեցած յարաբերութիւնքը լսելով սաստիկ ատամներ են կըճտացնում իրենց վրայ։ Թէ՛ տաճիկները տիրել են Վրաստանին և մօտենում են Հայաստանին։ Թէ՛ միւս կողմից լէզգիները իրենց յաճախակի յարձակումներով անդադար քարուքանդ են անում ժողովրդին, — այնպէս որ եթէ միքանի ամսւաց ընթացքում ուուսները զօրք չհասցնեն՝ հայերը բնաջինջ կը լինեն և ուստաց առաջ ճանապարհները կդոցւին։ Այն ևս զրում են մելիքները, որ իվան կարապետի միջոցաւ իրենց ուղարկւած հրովար-

տակը ստացան և լսելով կայսրի կամքն ու խորհուրդը՝ կաշխատեն հնար եղածին չափ ի կատար ածել, այսինքն որ հայ գաճառականները կաշխատեն իրենց տեղը դառնալ: Բայց առայժմ և ամեն բանից առաջ, անհրաժեշտ է սուսաց օգնութիւնը, քանի որ ուշ չէ տակաւին, քանի որ պատեհ ժամանակը վերջնականապէս ձեռքից չէ փախել:

ԺԲ

Եյս թղթերն Պետերբուրգ տանելու համար մի յատուկ պատգամաւորութիւն ևս կազմեցաւ: Ընտրւած անձինքն էին Առաքելեան Անտօն քահանայ և քեօխվայ Զէլէպի անունով աշխարհականը, որոնց հետ Աժդարխանում պէտք է միանային նաև Գիւլ Նազար և Զոր անունով երկու աշխարհականներ:

Պատգամաւորութեան նպատակը լինելու էր նախ՝ օգնութիւնը փութացնել և երկրորդ՝ ստուգել թէ հայերի գաղթեցնելու միաքը մըտեղից է ծագել: Եւ եթէ այդ միաքը բարձրից է, — ապայայտնել որ, հայերը հակառակ են այդ մտքին:

Պատգամաւորները 1723 թ. նոյեմբերի 24-ին հասան Բագու և այնաեղից Աժդարխան, որտեղ ժեներալ Մատիւշկինը վերցնելով նրանից կաթողիկոսի և մելիքների թղթերը՝ ուղարկեց կայսեր, իսկ պատգամաւորներին արգելեց առաջ գնալ կամ գոնէ յետ դառնալ:

Վեց ամիս նրանք Աժդարխանում պահւած մնացին, մինչև որ վերջապէս Մինաս վարդապետի թախանձանօք թոյլ տրւեցու Մատիւշկինին, որ պատգամաւորներին բիենապահեցրով Պետերբուրգ ուղարկէ, ուր նրանք հասան 1724 թ. նոյեմբերի սկզբին և 5-ին գրաւոր ցուցում տալով իրենց նպատակի վերաբերմամբ ապաներկայացան կայսեր, որ թէն հիւանդ էր, բայց և այնպէս նրանց ընդունեց և միքանի ժամ հետները խօսեց:

Բայց մինչև պատգամաւորութեան ընդունելը՝ կայսրը Աղւանից կաթողիկոսի և մելիքների թղթերից (որ Մատիւշկինը Աժդարխանից ուղարկել էր) արդէն հասկացել էր, որ գաղթելու մտքին հայերը հակառակ են: Նոյնը նաստուգել էր իվան Կարապետից և իր գեսպանից պահանջած և ստացած հաւաստի զեկուցագրերից:

Սակայն բանը նրանումն է, որ 1723 թ. սեպտեմբերի 12-ին Պետերբուրգում սուս-պարսկական դաշնագրութիւն էր կնքւած, որով Ռուսաստանը Պարսկաստանից Դերբենդ, Բագու, Գիլան, Մազանդարան և Աստրաբատ քաղաքները ստանալով փոխարէնը պարտաւորւած էր Թահմադ շահի գահը պաշտպանել ճնշելով նրա հպատակների, այսինքն հայերի և վրացիների ապահումը միամիտ ներկայացուցիչները:

Եյս դաշնագրի դուռըթեան մասին՝ միանգամայն անտեղեակ լինելով միամիտ հայերի միամիտ ներկայացուցիչները, շարունակում էին

ապարդիւնօրէն ոռւս արքունիքի գոյները բաղ-
խել:

Միւս կողմից՝ Պետրոս Մեծի համար ան-
հրաժեշտ էր Պարսկաստանից ստացած վերոյի-
շեալ քաղաքները շէնացնել և սահմանների ա-
պահովութեան համար քրիստոնեայ տարրեր
բնակեցնել այն տեղերում:

Այս էր պատճառը, որ Իվան Կարապետին
Պարսկաստան ուղարկելով՝ ոռւսաց կայսեր նը-
պատակն էր, որ նա աշխատի հայերին յօժարա-
կամ գաղթեցնել: Սակայն երբ կայսրը տեսաւ,
որ հայերը գաղթելու տրամադրութիւն չունին,
— այնուհետև որոշեց՝ ինչ էլ որ լինի, իր կամ-
քը առաջ տանել:

Ուստի իրեն ներկայացող պատգամաւորու-
թեանը մի հրովարտակ յանձնեց 1724 թ. նո-
յեմբերի 20-ին Ազւանից կաթողիկոսին և մելիք-
ներին հասցնելու:

Այս հրովարտակով Պետրոս Մեծն առաջար-
կում էր հայերին, — համաձայն իրենց պատգա-
մաւորեների խնդրանաց, — գաղթել իրենց հայրե-
նիքից ոռւսաց ձեռքն անցած նոր քաղաքները,
ուր նըանց խոստանում էր ամեն տեսակ օգ-
նութիւն, յարմարութիւն և ապահովութիւն:

Կայսրը այս էլ էր աւելացնում, որ գաղ-
թականներին ընդունելու և նըանց ամեն կերպ
օգնելու համար ինքն արդէն պատշաճաւոր հրա-
հանգ ուղարկել է նորանուած երկիրների ոռւս
իշխանաւորներին:

Կնքած հրովարտակը պատգամաւորներին
յանձնելիս կայսրը բերանացի ասաց նըանց, որ
եթէ մելիքները իր խորհուրդը լսեն և կատա-
րեն, կարճ ժամանակում այնքան ապահով և
բարեկեցիկ վիճակ կունենան, որ իրենց բոլոր
նեղութիւնները և իրենց հայրենիքը կմոռանան:

ԺԹ

Հայ պատգամաւորներին ճանապարհելուց
անմիջապէս յետոյ՝ պետական կանցլերը մի նա-
մակ գրեց Իվան Կարապետին, որ տակաւին
Պարսկաստանումն էր, հրահանգելով նըան ան-
շուշտ գլուխ բերել հայերի գաղթը դէպի նորա-
նւած վայրերը:

Եւ վստահ ու ապահով, որ Իվան Կարապե-
տը ի կատար կածէ իրեն տրւած հրահանգը, —
Պետրոս Մեծը հետեւեալ նամակը ուղարկեց Կ.
Պոլոյ դեսպան. Ռումեանցովին. «Պարսկահայե-
րի կողմից մի պատգամաւորութիւն դիմեց մեզ
խնդրելով, որ իրենց պաշտպանենք իրենց թըշ-
նամիններից (պարսիկներից). իսկ եթէ պաշտ-
պանել չենք կարող, — յայն դէպս բոլլ տալ իրենց
գաղրել Պարսկաստանից մեր ձեռնի անցած զա-
րանները:*)

*) Այսպիսի բան պատգամաւորութիւնը չէր
խնդրել, ոչ էլ մտքովն անցկացրել: Այլ այդ միտքը
նըանց ներշնչւել էր Մոսկվայում կամ Պետերբուրգում:
Եւ ոչ միայն ներշնչւել այլև պատգամաւորութեան անու-
նով մի նոր թուղթ էր շարադրւած և նըանց ստորա-

«Մենք նրանց յայտնեցինք, որ Բարձրագոյն Դրան հետ ունեցած դաշնագրի զօրութեամբ՝ մենք հայերին չենք կարող պաշտպանել։ Սակայն թոյլատրում ենք նրանց գաղթելու կասպեան ծավեզրի մեր գաւառները։ Եւ այդ իմաստով պատգամաւորութեանը մեր կայսերական հրովարտակն ևս տինք։

«Եթէ տաճիկները, — շարունակում է կայսրը, — այս մասին ձեզ հարց ու փորձ անեն՝ պատասխանեցէք, որ հայերին մենի չենի չենի հրայիրել գաղրելու, այլ իրենք ինքնաբերաբար դիմել են մեզ խնդրելով, որ մենք նրանց իրրեզիլ տւած առանց թղթի խսկական բովանդակութեան հետ ծանօթացնելու ստորագրողներին։

Երբ կաթողիկոսն ու մելիքները կայսեր հրովարտակը բացին և իրենց գաղթման հրաւերը լսեցին՝ զարմացան ու զայրացան։ Խսկոյն քննութիւն նշանակեցին, որից երեցաւ, որ Անտօն քահանան իմանալով է ստորագրել թղթին։ Կաթողիկոսը խսկոյն նրան կարգալոյծ արաւ։ Այնուհետեւ ժողովականք, — կաթողիկոսն ու մելիքները կայսրին մի թուղթ գրեցին, որով միանգամայն հրաժարում էին գաղթելու առաջարկից։ Եւ իրենց հրաժարումը պատճառաբարմում էին շատ հիմնաւոր կերպով, թղթումը զանց չարին յայտնել կայսրին, որ գաղթման մասին ոչ իրենք էին խնդրել և ոչ էլ իրենց պատգամաւորներին իրաւունք տվել ։ Եւ ուրիմն սրանց զիմումն ապօրինի է և անընդունելի։ Այս թուղթը Պետերբուրգ ուղարկեցաւ նոյն քիոխվայ Զէլբիի և Անտօն՝ արդէն կարգալոյծ քահանայի ձհոքով, որպէսզի զնան և անձամբ վկայեն, որ իրենք սխալած և իրաւագանց են գտնւել։ Սակայն մինչև սրանց Պիտերբուրգ հասնելը Պետրոս Մեծը վախճանւած էր։

գաւանակիցների, մեր հովանաւորութեան տակն առնենք։ Հայերի այս խնդիրը, իրրեւ քրիստոնեաների, մենք չենք կարող մերժել, ինչպէս որ տաճկաց վէզիրը ինքը յաճախ յայտնել է, որ ինքը չէր կարող իր գաւանակիցների խնդիրը մերժել։*)

«Այս ևս յայտնեցէք վէզիրին, որ հայերի գաղթը մինչև անգամ օգտակար կլինի տաճիկներին, որոնք այնուհետեւ նրանց հողերին տէր կգառնան։

«Այս ևս տւելացրու, — շարունակում է կայսրը իր հրահանգը Ռումինեանցովին, — որ եթէ տաճկաց կառավարութիւնը կցանկանայ Պարսկաստանից մեզ հասած գաւառների մահմեդականներին գաղթեցնել դէպի իր երկիրը, — մենք չենք հակառակիլ։ Եւ եթէ վէզիրը այդ

*) Հետեւելով իր նախորդին՝ կատարինէ Առաջինը հրամանագրեց ուր հարկն է, որ անպատճառ հայերի գաղթը յաջողեցնեն։ Սակայն պաշտօնեաների գործ գրած խաղաղ ջանքերն և կարգացած յորդորները ի զուր էին անցնում։ Այնպէս որ իշխան Վասիլ Դոլզորուկին ահա թէ այդ առթիւ ինչ է զրում կայսրունուն 1726 թւին։

— «...Իսկ ինչ վերաբերում է նրան, որ ինձ հրաժարած է համոզել հայերին, որ նոքա վերաբնակւին մեր տիրապետած պարսկական նոր սահմաններում — այդ բանը նրանք լսել անգամ չեն ուզում, և պէտք է խոսավանել, որ միծ իրաւունք ունեն, թողնել պէտքական տեղերը և գալ անպառող երկիր...» («Փորձ» 1877-78, Բ. տարի, եր. 373):

մասին ձեզանից գրաւոր հաւաստիացում պահանջեց — ուէք» :*)

Պօլսոյ դեսպանին ուղղած այս թղթից յետոյ Պետրոս Մեծը մեռաւ 1725 յունւարի 28-ին:

Եւ այսպիսով հայկական հարցը մոռացութեան տրւեցաւ կամ աւելի ճիշտը՝ առկախ մըսաց մինչև կատարինէ Մեծի թագաւորելու:

* * *

Սակայն Պետրոս Մեծի մահան մասին տեղեկութիւն չունենալով հայերը շարունակում էին իրենց թախանձանքը ուռւս արքունիքից իրենց օգնութեան հասնելու համար:

Սապէս Պետրոս Մեծի մահից յետոյ ուռւս արքունիքը կրկին երկու թուղթ ստացաւ Եսայի կաթողիկոսից և մելիքներից ու իւղաշիներից:

Առաջին թուղթը գրւած էր 1725 թ. մարտի 10-ին և երկրորդը՝ նոյն թւականի յուլիսի 25-ին, որոցմով տաճիկների վրաստանում և Հայաստանում տիրած քաղաքները թւելով՝ կաթողիկոսն ու մելիքները իրենց համար շուտա-

*) Ռումանցովին ուղղւած այս թղթի հետ միաժամանակ՝ Կառալից ծովեղերքի կառավարիչ Շեներալ Մատիւշկինին էլ գրւեցաւ՝ որքան կարելի է, աննկատելի կերպով, աշխատել մտքբելու Գիլանն ու Մազանդարանը մահմեդականներից, և ան դար առ կերպով ոչ չացնելով նրանց, որպէսզի յետոյ կարելի լինի նրանց տեղերը հայ գաղթականներով լցնել (Խամս. Մելիք., եր. 34):

փոյթ օգնութիւն էին լինդրում ուռւսներից: Միայն այս անգամ աւելացնելով, որ եթէ Ռուսաստանից զօրք ուղարկելն անկարելի է, — թող գոնէ Բագւում գտնւող պահնողդական զօրքին հըրամայւի Շամախի վրայ շարժւելու: Հայերը իսկոյն ուռւսաց զօրքի հետ միանալով՝ թշնամուն յետ կմղեն անշուշտ:

Իսկ եթէ այդ ևս անկարելի է, — աւելացնում էին կաթողիկոսն ու մելիքները, — թող գոնէ վրաց Վախտանգ թագաւորին կամ նրա Շահնաւագ որդուն պատւէր տրուի օգնութեան հասնել հայերին, որոնք ամբողջ երեք տարի մենամենակ դիմադրում են աաճիկներին, մինչև անգամ նրանց 6000-նոց մի բանակը կոտորելով և զօրավար վաշային գերի վերցնելով:

Բայց, ինչպէս զիտենք, Պետրոս Մեծը, որին ուղղւած էին կաթողիկոսի և մելիքների այս թղթերն, արդէն վեց ամիս առաջ մեռած էր և նրան յաջորդել էր Եկատերինա Առաջինը, որ 1726 թ. փետրւարի 22-ին հետեւալ պատասխանը գրեց.

«Զեր ուղարկած Քեօխվա Զէլէպին հասնելով այստեղ» *) ներկայացրեց մեղ ձեր թուղթը: Մենք լսելով ձեր խնդիրը՝ մեր պատասխանը բերանացի յայտնեցինք նրան ձեղ հաղորդելու

*) Պետրոս Մեծի մահից յետոյ՝ Քեօխվա Զէլէպին 1725 թ. մայիսի 16-ին Պետերբուրգից հասել էր Գանձասար, բայց այժմ նորից ուղարկւեցաւ Պետերբուրգի իրբե պատգամաւոր:

համար։ Ուրեմն դուք նրա ասածներին հաւատ ընծայեցէք։ Մեր բերանացի պատասխանից դուք կտեսնէք, որ մենի դեպի ձեզ շատ ողորմած ենի և թէ դուի մեր ողորմածուրիւնից գոհ և բարական պիտի մնայ և յոյսերդ մեղնից չըպիտի կտրէֆ։

Իսկ կայսրուհու բերանացի պատասխանն այն էր, թէ՝ Վախտանգ թագաւորին և իշխան Դօլգորուկովին պատէր կուղարկվի մի փոքրիկ բանակով հայերին օգնութեան համնել։

Սակայն կայսրուհու այս խոստումը դլուխ չեկաւ։

Այն կողմերում գտնւող ոռւս գորքերի գլխաւոր հրամանատար իշխան Դօլգորուկովը կայսրուհու հրամանն այնպէս ըմբռնեց, իբրև թէ նրան հրամայւած է ոչ թէ հայերին օգնելու գօրժ ուղարկել, այլ թէ՝ հայ զինուրներին ուսաց ծառայութեան մէջ ընդունել՝ ոռուս զօրին օգնելու համար։

Այս վերջին մտքով ընդունելով կայսրուհու պատէրը՝ իշխան Դօլգորուկովը 1737 թ. մայիսի 11-ին գրեց նրան թէ՝ նա ինքը իր կողմից հայերի օգնութեանը կարիք չէ զգում, որովհետեւ նախ՝ թուրքերը թոյլ են և իրեն երկիւղ չեն ազդում և երկրորդ՝ այդ բանը Դուան հետ կնքւած դաշնագրին հակառակ կլինի։

Ուստի, — շարունակում է իշխան Դօլգորուկովը, — կայսրուհու կարգադրութեան գործադրութիւնը պէտք է յետաձգել մինչև որ յարմար

առիթը գայ։ Իսկ մինչև այդ պէտք է հայերին յուսադրել, որպէսզի նրանք՝ յոյսերը մեզնից կտրելով՝ թուրքերին անձնատուք չլինին։

ԻԱ.

Հէնց այս նպատակաւ էլ՝ իշխան Դօլգորուկովը Քեօխվա Զէլէրիին նորից Պետերբուրգ վերադրեց, ասելով նրան, որ ինքն իբրև թէ հայերին օգնելու հրամանագիրը տակաւին չէ ստացած, — ուստի թող Զէլէրին գնայ և հրամանագրի առաքումը փութացնէ։

Քեօխվա Զէլէրին Պետերբուրգ վերադրած նելով՝ նրա ընկեր պատգամաւորներին Դօլգութուկովը պահեց իրեն մօտ, որպէսզի հայրենիք գնալով նրանք ժողովրդի սիրալ ուռւներից չըսաւեցնեն և մտքերը չպղտորեն։

Զէլէրին Պետերբուրգ գնաց և վերադրածաւ, նեալ բերելով Բարձրագոյն գաղտնի Խորհրդի 1727 թ. օգոստոսի 11-ի հրամանագիրը հետեւ բովանդակութեամբ. «Մեր նախկին հրամանագիրների տրամադրութեամբ՝ դուք պէտք է այդտեղի գօրքի մի մասը բաժանէիք և այնպիսի շարժումներ անէիք, որ իբր թէ Պարսկաստան մանելու պատրաստութիւններ էք տեսնում, իբր թէ պատերազմական գործողութիւնների էք ձեռնարկում։ Զեր շարժումները տեսնելով՝ հայերը սիրտ կտունէին, կըաջալերւէին և մեզ վրայ ունեցած իրենց յոյսերում կամրապնդւէին։

«Այսուամենայնիւ, — շարունակում է պաղտնի Խորհուրդը, — ձեր հայեցողութեանն է թողնում վարւել այնպէս, ինչպէս որ դուք, նայելով տեղական հանգամանքներին և տէրութեան օդտին, յարմար կհամարէք: Բայց ինչ էլ որ լինի՝ դուք անշուշտ աշխատելու էք, որ հայերը դէպի մեզ պինդ կանգնեն, որ նրանք բնաւ դէպի թուրքերը չհակւեն: Եւ դրա համար նրանց միշտ յոյսեր տւէք, պարգևներ խոստացէք: Նոյնպիսի յոյսեր էլ մենք այստեղ եկած հայերին կտանք»:

Եւ արդարե, երբ Եկատարինա Սոռաջինին յաջորդեց Պետրոս Երկրորդը՝ և հայերը նորից աղերսագրեր պատրաստեցին և նորից պատգամաւորներ ուղարկեցին Պետերբուրգ, — այնտեղ նրանց ոչ միայն յոյսերով կերակրեցին, այլ նաև մեծամեծ նւէրներով քաջալերեցին: Պատգամաւորներից՝ Թարխան Իւզբաշուն 1000 ռուբլի փող և սօբոլի մուշտակ նւիրեցին: Նոյնը տւին — նոյնքան գումար և նոյնպիսի մուշտակ տւին՝ և Աւան Իւզբաշուն:

Եւ սահմանեցին, որ այդ ազգեցիկ երկու իւզբաշներին ամենայն տարի Բագւի Եկամուտներից 1000-ական ռուբլի տրւի:

Այդ երկու իւզբաշների հետ եղող Մելքոն Այդինեանին, Գրիգոր Եսայեանին և Ներսէս Աղաբէգեանին 300-ան ռուբլի միանւագ: Իսկ պատգամաւորութեան 5 ծառաներին՝ 25-ական ռուբլի:

Բացի այս գրամական նւէրներից՝ պատգա-

մաւորներից միքանիսին տատիճանն և շքանշան էլ արւեցան:

Եւ այս նոէրներով ու պարգևներով խըրախուսւած հայ պատգամաւորութիւնը վերադարձաւ հայրենիք և սկսեց յուսագրել և խրախուսել իր հայրենակիցներին այնքան ժամանակ, մինչև որ 1732 1735 թւերին՝ ոռւս կառավարութիւնը յետ կանգնելով Պետրոս Մեծի ծրագրից՝ Պարսկաստանից վերցրած Կասպիան ծովեղբեայ երկրները նորից Պարսկաստանին վերադրձեց՝ նրանց պահելն տէրութեան համար վխասակար համարելով թէ ուղմական և թէ տնտեսական տեսակէտներով:

Ոռւս քաղաքականութեան այս փոփոխութիւնը, ինչ ասել կուզի, հայերի էլ յոյսն ու ակնկալութիւնը միանգամայն ջուրն ածեց:

Եւ այժմ նրանք ոռւսներից մոռացւած ու արհամարհւած, իսկ իրենց տիրապետող տէրութիւնների կողմից ատելի և յանցապարտ ճանաչւած, իրենք էլ չէին իմանում թէ ինչ անեն և ում դիմեն: Նրանց բազդից՝ ոռւսական Գահոյքի վրայ բարձրացած Եկատերինա Երկրորդ կայսրունին՝ Պետրոս Մեծի ծրագրին պաշտպան հանդիսանալով նորից հրապարակ հանեց այն: Եւ նրա հետ հարկաւ նորից հրապարակ պիտի գային և հայերը իրենց չարաշուք հայկական հարցով:

ԻԲ

Որքան որ հայ ժողովուրդը և նրան ղեկավարող հոգեսր և աշխարհական անձինք դեռ յոյ-

սերը ոռւսներից չկտրած՝ շարունակում էին իրենց դիմագրութեան և անձնապաշտպանութեան գործը, բայց և այնպէս նրանց մէջ յայտնւեցան մարդիկ, որոնք յուսերը ոռւսներից կտրած՝ դիմեցին վրաստանում լաւ անուն հանած հայազգի Դաւիթ-բէգին և նրա ձեռքի տակ ծառայող միքանի հայազգի զինւորական աստիճանաւորներին և նկարագրելով Հայաստանի դառն վիճակը՝ հրաւիրեցին նրանց օգնութեան համնել:

Դիմողների պարագլուխը՝ Ստեփանոս Շահումեանցն էր, — Դաւիթ-բէգի պատանեկութեան ընկերը:

Պատշաճաւոր թոյլաւութիւն ստանալով վրաստանի պետից՝ Դաւիթ-բէգը անյապաղ Հայաստան մեկնեցաւ իր հայ ընկերներով:

Համնելով իր հայրենիքը՝ Մեծ Սիւնիքի Շինուհայր գիւղը և Աղւանից կաթողիկոսի ու մելիքների հետ խորհրդակցելով՝ Դաւիթ-բէգը տեղւոյն հայ երիտասարդներով միքանի փոքրիկ ասպատակիչ խմբեր կազմեց և իր յանկարծական, ճարպիկ յարձակումներով այնպիսի մի սարսափ ձգեց մահմեդական թափառաշրջիկ և հաստատաբնակ տարրի վրայ, որոնք թողին ամեն բան և հեռացան Սիւնիքից:

Դաւիթ-բէգի այս լաջողութիւնները՝ դէպի ինքը գրաւեցին միւս տեղերի հայերին ևս, որոնք խումբ-խումբ գալիս էին և զինւորագրուում:

Առանց իր յաջողութիւններով յափշտակւելու՝ Դաւիթ-բէգը լուր առնելով, որ օսմանցիք պատ-

րաստում են իրեն վրայ յարձակւելու, անմիջապէս ձեռնարկեց միքանի բերդեր շինելու և եղածները ամրացնելու: Եւ նրանց մէջ պատոպարւելով՝ միքանի անդամ և միքանի տեղերում մեծ ջարդ տւեց նաև օսմանեան առաջ ընթաց փոքրիկ բանակներին, որոնք երեանին և Արցախին տիրելով, հետզհետէ մօտենում էին Մեծ Սիւնիքին:

Այդ միջոցին Դաւիթ-բէգը դիմեց պարսից թահմագ շահի օգնութեանը,

Վերջինս պատասխանեց, որ ինքը զօրքով օգնելու հնարաւորութիւն, նոյնիսկ իրաւունք, չունին: Բայց որտանց համակըսւմ է Դաւիթ բէգին և անկեղծօրէն ցանկանում է, որ պարսից և տաճկաց ու ոռւսաց սահմանների մէջտեղում Դաւիթ-բէգը կարողանայ մի փոքրիկ հայկական ինքնուրոյն իշխանութիւն կազմել:

Եւ ի հաստատութիւն իր այդ ցանկութեանը՝ թահմագ շահը՝ ի պաշտօնէ ձանաչեց Դաւիթ բէգին հայոց ինքնագլուխ իշխան՝ նրա իրաւասութեանը ենթարկելով այն կողմերի բոլոր մահմեդական ազգաբնակութիւնն իրենց մեծ ու փոքր իշխանաւորներով:

Բացի գրանից՝ թահմագ շահը Դաւիթ բէգին իրաւունք տւեց իր անունով գրամ կտրել:

ԻԳ

Մինչդեռ պարսից շահի այս խրախուսիչ յորդուներով սիրտ առնելով Դաւիթ բէգը՝ այլ

և այլ ծրագիրներ էր կազմում ապագայի համար, և ահա նա հաւաստի լուր ստացաւ, որ 1724 թ. յունիսի 24-ին սուսների և օսմանցիների մէջ մի գաղտնի դաշինք է կնքւած, որով Ղարաբաղն ու Ղափանը (Փոքը ու Մեծ Սիւնիքը) թողնուած է օսմանցիներին, որոնք և ի հետևուան այդ դաշինքին՝ 70,000 հոգուց բաղկացած մի կանոնաւոր զօրաբանակով գալիս են Դաւիթ բէգի վրայ՝ միանդամայն արձակ, համարձակ ու անարգել:

Ստանալով այս աղէտաբեր լուրը՝ Դաւիթ բէգը թէկ չյուստհատւեցաւ բացարձակօրէն, թէկ օսմանեան այդ հզօր բանակին դիմադրելու հընարներ մտածեց, միջոցներ գտաւ իր ստորադրեալներին պարտ ու պատշաճ պատւէրներ և հրահանգներ տւեց, բայց ի մեծ դժբաղդութիւն Դաւիթ բէգին իրեն և գործին՝ նրա զինւորները հէնց որ լսեցին օսմանեան բանակի մերձենալը՝ սարսափահար թողին նրան և փախան, ցրւեցան: Դաւիթ բէգի մօտ մնացին ընդամենը 17 հոգի, որոնց թւումն էին Եսայի կաթողիկոսը և 6 հոգի եպիսկոպոսներ ու քահանաներ.

Այս հանգամանքը կարեվեր խոցեց Դաւիթ բէգի և իրանից անբաժան մնացած նրա հոգեսր և աշխարհական ընկերների սիրտը: Եւ նրանք, ինչպէս ասում են, ձեռքով էլ և սրտով ու գըլ-հով էլ թուլացան:

Դաւիթ բէգը հիւանդացաւ և Հալիձորի բեր-

դում անկողին մտնելով՝ միքանի օրից յետոյ մեռաւ 1728 թւին:

Ճիշտ է՝ նրա յաջորդները՝ Տէր Աւետիք քահանան, Մխիթար սպարապետը, Փարսադանը, Ստեփանոս Շահումեանը առժամանակ մի դիմադրեցին արդէն Ղափան հասած օսմանեան բանակին: Նոյնիսկ միքանի փոքրիկ յաջողութիւն էլ ունեցան: Բայց վերջ ի վերջոյ իրենց մէջ երկպառակեցան, նոյնիսկ իրենց միջից թըշնամու կողմն անցնողներ էլ գտնւեցան: Թշնամու կողմն կողմն անցաւ նաև Ագուլիսի ամբողջ հայ հասարակութիւնը:

Եւ այսպիսով օսմանցիք եկան և աիրեցին առւստամկական դաշինքով իրենց տրւած Հայաստանի այդ մասին: Եւ այսպիսով ահա հայերը պարսից լծից դուրս գալով՝ օսմանեան լծի տակ մտան— իզ օգոյ վե ոլոյմք:

Ի՞

Դաւիթ-բէգի մահւան տարին մեռաւ նաև Աղւանից Եսայի կաթողիկոսը, որ 25 տարի շարունակ ինքն իրեն նւիրել էր իր հայրենիքի ազատագրման գործին:

Եսային մեռաւ պատմիչի ասութեամբ, «սրտի ցաւից», այսինքն միանդամայն յուսախարւած և յուսահատւած ուուս կարավարութեան բոնած դիրքից գէպի հայերը:

Գալով Մինաս վարդապետ Տիգրանեանին,

—նա էլ ստիպւած էր քաշւելով ասպարեզից՝
մեկուսանալ Մոսկվայի իր խցիկի մեջ՝ միան-
դամայն արհամարհւած ու լքւած ամենքից:

Էջմիածնի և Աղւանից կաթողիկոսները իս-
պառ մոռացութեան տւին նրան. Ղարաբաղի
մելիքները սկսեցին ատամներ կրճատցնել նրա
վրայ, իսկ ժողովուրդը սկսեց անիծել նրան, իբրև
ոկզբնապատճառի տեղի ունեցած աւերածութիւն-
ների ու սրածութիւնների:

Իրենց հերթում պարսիկ և տաճիկ կառավարու-
թիւններն ևս իրենց գործականների միջոցաւ՝
աշխատում էին ձեռք ձգել նրան: Ուստի ողոր-
մելի ծերունին վախում էր նոյնիսկ Մոսկվայում
աշկարայ փողոց գուրս գալու:

Ի լրումն այս ամենին՝ ոռւս կառավարու-
թիւնը ևս Պետրոս Մեծի մահից յետոյ՝ ընդհատել
էր նրա թոշակի, որ օրական 5 կողէկ էր, տըւչու-
թիւնը:

Այսպէս որ Մինաս վարդապետը ամբողջ 35
տարի իր աղջի ազատագրման գործին անկեղ-
ծօրէն ծառայելուց զկնի, վերջերում բարոյական
և նիւթական ամենաանմխիթար. կացութեան մէջ
էր գանւում:

Եւ այլիս անկարող լինելով իր խաչը տանե-
լու՝ 1736 թւի մարտին դիմեց այն ժամանակի
շատ ազդեցիկ աւագանի Սիմէօն Սալտիկով գուք-
սին և 19 կէտերից բաղկացած զեկուցագրով՝
թւելով իր ծառայութիւնները որ 1701 թւից
սկսած մինչև Պետրոս Մեծի մահը մատուցել էր

Ռուսաստանին՝ աւելացնում է որ իր այդ ծառայու-
թիւններով՝ փոխանակ օգնած լինելու իր ազգին,
ընդհակառակը վասակար եղաւ՝ միանդամայն
հակառակ իր սպասածին, որ իր հայրենիքի ու
ազգի կրած բազմազիմի աղէտների թշւառու-
թիւնների երեսից՝ նա շարունակ տանջւում է
իր խղճից ու տառապում է ոչ միայն բարոյ-
ալէս, այլ նաև նիւթապէս:

Ուստի և յանուն մարդասիրութեան խընդ-
րում, աղաչում է գուքս Սալտիկովին, որպէսզի
Պետրոս Մեծի սահմանած իր թոշակի տըւչու-
թիւնը շարունակվի և միևնոյն ժամանակ զինուր-
ների պահպանութեամբ ինքն Աժդարիսան ուղար-
կվի, իբրև Աղւանից կաթողիկոսից կարգւած եր-
բեմի առաջնորդ: Որպէսզի այստեղի հայ ժողո-
վրդին հովելով՝ թէ իր հովւական պաշտօնը կա-
տարած լինի ուժերը ներածին չափ, և թէ իր
ծերութիւնը խնամած լինի:

իե

Ծերունի գործիչի այս խնդիրը սուս կառա-
վարութիւնը չյարգեց սակայն, ես կարծեմ, երկու
պատճառաւ:

Նախ՝ որ Մինաս վարդապետը ոյժից ընկած,
հայերի առաջ իր բոլոր համարմունքը կորցրած,
ուրեմն այլիս տէրութեանը ծառայութիւն մատու-
յանելու անընդունակ դարձած մի մարդ էր,

Եւ երկրորդ՝ որ նա կարող էր թերես վասար-

կար էլ գառնալ կառավարութեան համար։ Որովհետի կարեվէր վշտացած էր կառավարութեան վարմաւնքից, ինչպէս որ պարզ ի պարզոյ արտայյատել էր Սալտիկով դուքսին տւած զեկուցագրումը։ Հետեաբար՝ եթէ ուրիշ ոչինչ էլ չկարողանալ անել, — հօ կարող էր իր սրտի ցաւերը հրապարակաւ պատմել, որան ու նրան կարող էր իր իմացած տէրութենական գաղտնիքներն ևս հրապարակ հանել և այն։

Այսպէս Մինաս վարդապետի վերջին յոյսն ևս ջուրն ընկաւ։

Ուրեմն այնուհետեւ նրան էլ ուրիշ ոչինչ չէր մնում անել, եթէ ոչ օր առաջ գերեզման իջնել, որ և տեղի ունեցաւ, բայց թէ երբ և որտեղ՝ պատմութիւնը լուրս է։^{*)}

Կարծեմ լէօն և նրանից վերցնելով պրօֆէսոր Թումայեանը գրում են, որ Մինաս վարդապետը վերջերում կամեցաւ պրօֆօսլաւութիւն ընդունելով ոռւս եկեղեցու պաշտօնեայ գառնալ։ Սակայն կառավարութիւնը նրա այդ խնդիրն ևս մերժեց։

Թէև ինձ յայտնի չէ, թէ որ աստիճան ձիշտ է Մինաս վարդապետի հաւատափոխ լինելու այս լուրը, բայց ես ենթադրում եմ, որ կարող է և ձիշտ լինել։

^{*)} Ծանօթ. Պ. Թումաս ասում է որ «Աստղախանում» հայոց Պօղոս Պետրոս եկեղեցու բակումը է թաղւած Մինաս վ. Տիգրանեանը (Խարյէլ Օրի, Աստրախան 1912 թ. էր. 38)։

Զքաւորութեան մէջ տառապող և ոչ մի տեղից յոյս չունեցող ծերունուն հաւատափոխ լինելու ցանկութիւնը՝ անշուշտ հացի խնդիր էր։ Իսկ կառավարութեան մերժումը՝ քաղաքականութեան խնդիր էր։

Ինչ էլ որ լինի՝ Տիգրանեան Մինասը՝ վարդապետ և նոյնիսկ արքեպիսկոպոս էր։ Այս բանը կառավարութեանը քաջ յայտնի էր։ Տիգրանեանը իր ժամանակին իր արքեպիսկոպոսութեան և ոռուսահայերի առաջնորդութեան կարգման կոնդակը անձամբ տւել էր ոռուս արքունիքին։ Պետրոս Մեծին և ոռուս աւագանին ուղղած թղթերի տակ նա միշտ ստորագրում էր «Մինաս վարդապետ—արքեպիսկոպոս»։

Բայց ինչպէս իր արքեպիսկոպոսութիւնը, նոյնպէս և առաջնորդութիւնը ժողովրդից թագցնում էր և այդ տիտղոսները պաշտօնապէս ժողովրդի առաջ չէր գործածում, որովհետի, — ինչպէս որ Սալտիկովին տւած զեկուցագրումը գրում է, — վախենում էր, որ հայերը և մանաւ անդ պարսիկները իրեն ոռւս կառավարութեան տգենալը կամ լրտեսը չհամարեն։

Այսպէս թէ այնպէս՝ ոռուս կառավարութեան համար ոչ մի հաշիւ չկար Մինաս վարդապետին մայրենի եկեղեցու ծոցից հանել և ոռուս եկեղեցու ծոցն ընդունել, որ անշուշտ կարող էր գայթակեցնել հայերին, որոնց հետ կառավարութիւնը տակաւին կալեր ունէր կալսելու։

Միւս կողմից՝ մէջանգում կային Պետրոս

Մեծի երկու հրովարտակները, — 1716 թ. յունիսի 14-ին և 1717 թ. նոյեմբերի 2-ին, — որոցմով սաստիկ արգելած էր ոռուս կղերին՝ ում և իցէ հայերից ընդունելու պրավուլաւ եկեղեցու ծոցը՝ «առանց հայոց յահանայից. և Մինաս արքիմանդրիսի զիտուրեամ» և նրանց համաձայնութեան*)

Այս վաղճանն ունեցաւ ահա հայկական հարցը իր երկրորդ շրջանում, որին պէտք է կցել և էմին Յովսէփեանի մասին եղած տեղեկութիւններն:

իջ

Էմին Յովսէփեանը, ծնաւ Պարսկաստանի Համագան քաղաքում այն տարին, երբ Դաւիթ-բէգի քաջագործութիւնով թնդում ու ցնցում էին Մեծ Սիւնիքի հայոց սրտերը:

*) Տարիներ անցնելուց յետոյ՝ Պետրոս Մեծի այս հրովարտակները մոռացութեան և զանցառութեան տաւով ոռուս կղերը մեծ եռանդով ձեռնարկեց հայերին հաւատափոխ անելու գործին, միանդամայն արհամարհելով ոռուսահայերի առաջնորդ Յովսէփի արքեպիսկոպոս Երկայնարագուկ-Արդութեանի բողոքները, որոնք այնքան ռէլիէֆ կերպով գուրս են բերւած նրա մի ընդարձակ նամակում, ուղղած 1795 թ. մայիսի 20-ին Պետրոսուրդի եր բարեկամ հայազգի երկու պաշտօնեաներին:

Յովսէփ արհին այն աստիճան յուգւած է ոռուս կղերի արարմունքից, որ կարծես զղացել է, որ ինքը այնքան ու այնքան ծառայութիւն է մատուցել ոռուս կառավարութեանը, ուստի և կողկողագին բացականչում է, «զինչ արասցուք, ուր փախիցուք և ուստի գացուք զօգնութիւն» (Դիւան Հ. պատմ. թ. եր. 179):

Էմինի հայրը՝ ընտանիքը Համագանում թողած՝ ինքը վաճառականութեամբ էր պարտապում Կալկաթայում:

Երբ Էմինը 16 տարեկան դարձաւ՝ նրա պապը վերցրեց պատանուն և տարաւ Կալկաթա հօրը մօտ: Այստեղ Էմինը տեսաւ համագանցիներից շատերին նոյն խոկ իրեն ծանօթներից և հասակակիցներից: Տեղական մի դպրոցում սովորելիս էմինը տարիների ընթացքում ականատես եղաւ այն ամեն կարգ ու կանոններին և բարեկարգութիւններին, ինչ որ անգլիացիք մինչև այդ ժամանակ մտցրել էին Հնդկաստանում:

Փողոցների մաքրութիւնը, ոստիկանների վերին աստիճանի քաղաքավարի պատրաստակամութիւնը հասարակութեանը օգնելու, մարդկանց ազատ, համարձակ, աներկիւղ շրջեն ու գործելը, իրաւունքների հաւասարութիւնը, դպրոցներ յաճախող մատաղ սերնդի խուռն բազմութիւնը, զօրքերի կանոնաւոր մարզանքները, անգլիական և հնդկական նաւերի մէջ եղած տարբերութիւնը, հաղորդակցութիւնների դիւրութիւնը, կրօնների ազատութիւն և այլն, — այս ամենը շլացուցիչ ազգեցութիւն էին գործում Համագանում ծնւած ու մեծացած Էմինի վրայ, որ երբ տեղեկացաւ վերջիվերջոյ, թէ հարիւրաւոր միլիօն հեթանոսների մէջ այդ ամեն կարգաւորութիւն մտցնողը մի բուռն անգլիացիք են, — մտքումը դրեց Անգլիա գնալ և սովորելով նրանց իմաստութիւնը՝ գնալ Հայաստան, ազատել պարսիկների և օսման-

ցիների ձեռքից, մտցնելով այնտեղ այն ամենը,
ինչ որ արել էին Անգլիացիք Հնդկաստանում:

ԻԵ

Հայրը բոլորովին բացասաբար վերաբերեց
Էմինի ցանկութեանը և խրատեց ու յորդորեց,
որ անգլիական դպրոցի դասընթացքը շուտ վեր-
ջացնելով՝ մանի հօր առետրական դործերի մէջ:
Բայց որդին դժոն հօր որոշումից՝ մի օր կալ-
կաթայից փախաւ գնաց Լօնդոն: Ճանապարհին,
նաւի միջում, էմինը ծանօթացաւ մի հայտղայի
հետ, որ Ամստերդամ էր գնում: Դա վերջերում
յայտնի բարեգործ դարձած Յովհաննէս Մասենն
էր:

Լօնդոնում էմինը մանում է մի դպրոց
Ստեփանոս անունով մի հայ-կաթողիկի աջակցու-
թեամբ և հովանաւորութեամբ: Բայց երբ վեր-
ջինիս առաջարկութիւնը — հաւատափոխ լինելու
համար — էմինը մերժում է, մոլեռանդ Ստեփան-
նոսը բոլորովին բարձի թողի է անում պատա-
նուն:

Իր օրական պարէնը հայթալթելու համար
էմինը մի անգլիացու խանութում բեռնակրի
պաշտօն է ստանձնում, ազատ ժամերը պատմա-
կան գըքերի ընթերցանութեան նւիրելով:

Մի օր էմինը փողոցում քրդի շորերով մի
հայի է պատահում, որ Հալէպից արաբական
ձիեր էր բերել Լօնդոն վաճառելու:

Իւ հայը էմինին իբր թարգման հետը
վերցնելով՝ ներկայանում է Նորթէմբրիլէնդի
դուքսին, որ լսու ձիերի սիրահար էր:

Էմինի ուշիմութիւնն ու անգլիերէն ազատ
խօսելը շատ դիւր է գալիս դուքսին, որ հետաք-
րքւում է նրա անցեալով, — Համադանից կալկա-
թա երթալն, այնտեղից էլ Լօնդոն գալու նըպա-
տակն և այնտեղ կրած նեղութիւնները: Դուքսը
առաջարկում է էմինին՝ իր պատմածները ձըշ-
տութեամբ գրի անցկացնելով՝ ներկայացնել իրեն:
Այդ պատւէրը ձշտութեամբ և արագութեամբ
կատարում է:

Նորթէմբրիլէնդի դուքսի պալատում տեղի
ունեցած մի երեկոյթում, ուր 300 ազնւական-
ների հետ կար նաև Անգլիոյ թագաւորի երկ-
րորդ որդին Թէմբրիլէնդի դուքսը՝ տանուտէրը
կարգում է էմինի գրութիւնը, որ շատ սրտա-
շարժ է եղել:

Թէմբրիլէնդի դուքսը պատւիրում է իր հաշ-
ով էմինին մացնել Ուիլիջի դպրոցը ուսանելու
համար զինորական արհեստը: Իսկ Նորթէմբրի-
լէնդի դուքսը՝ նրան իր պաշտպանութեան տա-
կըն է առնում՝ բաց անելով նրա առաջ իր պա-
տահի դռները:

Վերջին հանգամանքը լաւ առիթ է դառ-
նում էմինի համար՝ ծանօթանալու դուքսի պալա-
տը երթեկող անգլիական ազնւականութեան հետ:

Ուիլիջի դպրոցի դասընթացքը աւարտելուց
յետոյ էմինը՝ անգլիացի միւս ընթացաւարտների

հետ՝ անցնում է Բրուսիա և Թրէգէրիկոս Մեծին
ներկայանալով՝ մտնում է նրա բանակը ծառա-
լութեան:

Ի՞՞Ը

Բրուսական զինւորական ծառալութիւնը
վերջացնելուց յետոյ՝ Էմինը իր անզլիացի աղ-
նւական ընկերների հետ վերադառնում է Ան-
դիա - Լօնդոն:

Այս աեղից նա մի ընդարձակ նամակ է դը-
րում Վրաստանի Հէրակլ թագաւորին:

Բացատրելով եւրոպական և մասնաւորապէս
անզլիական ազգի մեծութեան և զօրութեան դադ-
անիքը, որ կայանում է ոչ թէ լոկ ֆիզիքական ոյ-
ժի, այլ գիտութեան և իմաստութեան մէջ, — Էմինը
խորհուրդ է տալիս Հէրակլին՝ իր բոլոր ուշա-
գրութիւնը դարձնել վրացիների և հայերի մեր-
ձեցման և կրթութեան վրայ, որով կարելի լինի
ժամանակին նրանցով մի միացեալ քրիստոնեայ
պետութիւն կազմակերպել մահմեդականներով
շրջապատւած և ճնշւած Ասիայի այդ մասերում:
Նամակի վերջում Էմինը իր պատրաստա-
կամութիւնն է յայտնում Վրաստան գնալու և
այնաեղ Հէրակլի հովանաւորութեան ներքոյ աշ-
խատելու իր մասնագիտութեանը վերաբերեալ
դպրոցում:

Հէրակլը այս նամակին չէ պատասխանում:
Ուստի Էմինը վճռում է անձամբ անձին

այցելել Վրաստանին և Հայաստանին և առ աե-
ղաւան ծանօթանալ և ուսումնասիրել ինչ որ
կարելի է և հնարաւոր, առանց սակայն հրատա-
րակելու իր նպատակը: Այլ իբրև սոսկ անզլի-
ացի ճանապարհորդ:

Բայց նախապէս դիմում է իր բարերար
Նորթէմբրլէնդի դուքսի խորհրդին:

Վերջինիս մօտ եղած մի փոքրիկ, առանին
խորհրդում՝ Էմինի ծանօթ ազնւականներից ոմանք
թէկ անգործնական են գանում նրա ծրագիրը,
բայց և այսպէս ձայների բազմութեամբ գտնում
են, որ հայ հայրենասէրի որոշումը, եթէ օգտա-
կար չլինի էլ, երբէք վնասակար չէ կարող լինել
իր հայրենակիցների համար: Եւ խորհուրդ են
տալիս, որ Էմինը առանձին ջանքով և խոհեմու-
թեամբ մերձենայ և ծանօթանայ հայերի, վրա-
ցիների և որանց հարեանների ու տիրապետող
ազգերի նիւթական և բարոյական վիճակի հետ,
նրանց հոգեբանութեանը և տրամադրութեանն
ու հակումների հետ և այն:

Խորհրդի մասնակցողների մէջ յիշում են
նաև հըռչակաւոր տիկին Մոնտագիւ, մեծ քաղա-
քագէտ և փիլիսոփայ Բլրք և ուրիշները:

Էմինի ճանապարհորդութեան ծախքը Նոր-
թէմբրլէնդի դուքսը իր վրայ է վերցնում:

Ի՞՞Ը

Անզլիական առևտրական նաւով Էմին Յով-

սէփեանը Լօնդօնից ճանապարհ ընկաւ Աղէքսան-
դրիա իր հետ վերցնելով Նորթէմբրը Էնդի գուք-
սի և միքանի այլ անգլիացի ազնւականների
յանձնարարական նամակները ռուսական միքանի
աւագանիների վրայ:

Եղաւ Պետերբուրգում, տեսմուեցաւ Հէրակլ
վրաց թագաւորի հօր հետ: Եղաւ Հայաստանում,
Վրաստանում, Պարսկաստանում: Արզրումում
տեսնւեցաւ Ենիչարիների հետ: Գաղստանում տես-
նւեցաւ Էզզիների հետ: Տեսնւեցաւ հայոց կաթո-
ղիկոսների և մելիքների հետ, մանրամասն հետա-
զոտեց հասարակ ժողովրդի կեանքը:

Եւ իր այդ ամեն տեսածները գրեց ու նկա-
րագրեց դուրս բերելով իր տեսած ազգերի և
անհատների լաւ և վատ կողմերը, նրանց մտա-
ւորական և տնտեսական վիճակը, իրեն հետ պա-
տահած դէպքերն ու արկածները որոնց մէջ շատ
ծիծագելի և ցաւալի բաներ էլ կան: Էմինը
առանձին իմն կերպով ուսումնասիրել է հայ հա-
սարակ ժողովրդի կեանքը:

Նրա ճանապարհորդութիւնն ամբողջ 10 տա-
րի է տևել, որից յետոյ վերադարձել է Անգլիա,
այդտեղից էլ Բասրա և ասլա Կալկաթա, ուր իր
զինուրական ընկերների թախանձանօք՝ իր ուսում-
նասիրութիւնը գրի է անցկացրել անգլիերէն, որ
և 1792 թւկանում Լօնդօնում տպւեցաւ Գառնէյդ
զօրավարի հրատարակութեամբ*), արդէն հեղի-
նակի մահանից յետոյ:

*) Էմին Յովսէփեանի մասին այս ամեն տեղեկու-

լ

Էմին Յովսէփեանի մասին մեր գրականու-
թեան մէջ, գոնէ որքան ինձ յայտնի է, ոչ մի
տեղեկութիւն չկայ:

Միայն Բաֆֆի Ա. Երիցեանից վերցնելով
(տես «Փորձ» 1877/78. Բ. տարի, եր. 375 և
379) նրա մասին հետեւել տողերն է գրել:

«1760 թւին Անգլիայից Ս. Պետերբուրգ
եկաւ հայազգի Էմին Յովսէփեանը, որ բնիկ Պարս-
կաստանի Համադան քաղաքից էր, իսկ Հնդկաս-
տանում միլիօններ էր աշխատել:

«Նա առաջարկեց իր բոլոր հարստութիւնով
օգնել ուսուներին, եթէ կը համաձայնէին իրենց
զօրքերով մասնակցել հայերի հետ՝ Հայաստանը
պարոից լծից ազատելու գործումը: Նրա առա-
ջարկութիւնը համակրութեամբ ընդունեցաւ:

«Էմինը Ս.-Պետերբուրգից Հայաստան եկաւ,
Ղարաբաղի մելիքները մեծ ոգեսրութեամբ ընդու-
նեցին նրան: Իրենք պատերազմելու համար սիրտ
ու զօրեղ բազուկներ ունէին, իսկ Էմինը փող
էր տալիս զէնքեր գնելու համար, Վրաց և Հայոց
մէջ մի զօրեղ գաշնակցութիւն կազմելու համար՝
Էմինը գիմեց Քաթալինայի իշխան Հէրակլին,
յայտնեց նրան իր միտքը: Բայց այս երկերեսանի

թիւնները հաղորդել է ինձ Լօնդօնի իմ բարեկամ Պետ-
րոս Տօնապետեանը, որ իմ խնդրանօք արդէն ձեռնար-
կել է Էմինի գրքի թագմանութեանը ի հայ լեզու:

իշխանը, որ այդ ժամանակ մի կողմից պարսից վեշիցն էր բնած, իսկ միւս կողմից աչքերը դարձրած ունէր դէպի Ս.-Պետերբուրգ, անհամակրութեամբ վերաբերւեցաւ դէպի Էմինի առաջարկութիւնը։ Հայոց Կրեսոսը այնուհեակ գնաց Կալկաթա յաղախական առանձին խորհուրդներով։ Բայց վաղահաս մահը թողեց նրա նպատակներն անկատար։ Նրա միլիօններն անտէր մնալով անգլիական բանակում, այնպէս էլ կուրան»*)։

Ա. Երիցեանի այս տեղեկութիւնները, որ նա էլ Սօլօվեօվ ոռւս պատմաբանից է վերցրել, —ինչպէս ընթերցողը տեսնում է, —բոլորովին տարբեր են պ. Տօնապետեանի ինձ հաղորդածներից։

Պաֆփի գրածի առաջին մասը՝ աւելի վերաբերում է Խորայէլի Օրին, քան Էմին Յովսէփեանին։ Բայց գրանցից առաջինը կէս դար առաջ էր Երկրորդից։

Պաֆփի գրածի Երկրորդ մասը՝ աւելի վերաբերում է Կալկաթացի Յովսէփ Ամիլխանեանցին, քան Էմին Յովսէփեանցին։ Բայց գրանցից էլ առաջինը Երկրորդից մօտ մի դար յետու էր։ Յովսէփ Ամիլխանեանցը՝ այլ ոչ Էմին Յովսէփեանցն էր, որ իր միլիօնները Ներսէս Աշտարակեցու միջոցաւ Նիկողայոս 1 կայսեր արամադրութեան տակն էր ուղում դնել։

*) Խամս. Մհլիք. եր. 92, գրեթէ այս մտքերն էր յայտնել «Մուրճի» մէջ, կալծեօք, և լէօն։

Պարձեալ՝ ըստ Պաֆփիի՝ Էմին Յովսէփեանը Պետերբուրգից «առանձին քաղաքական խորհուրդուներով» մեկնեցաւ Կալկաթա։ Մինչդեռ ըստ Տօնապետեանի՝ երբ Պետերբուրգում Էմին Յովսէփեանին առաջարկեցին շքանշան, ոռոճիկ և քաղաքական առանձին յանձնաբարութիւն, — Էմինը բացէ ի բաց հրաժարւեց, չկամենալով դաւաճանել իր սկզբունքին և որոշմանը։ Ճիշտ է վերջերում կատարինէ Բ.-ը հայկական հարցին ձեռնարկելիս Էմինին կրկին հրաւիրեց իր մօտ։ Բայց այդ միջոցին Էմինը մեռած էր։

Այս և սրա նման միքանի տարբերութիւններն ու թիւրիմացութիւններն անշուշտ այն ժամանակ կապազարանւին՝ երբ Տօնապետեանի թարգմանութիւնը կտպագրուի։

Անգլիայում մեծացած, անգլիական ուղղութեամբ կրթւած ու դաստիարակւած, անգլիական ծրագրով առ տեղեաւն կատարւած և անգլիական զօրավարի հաշուով տպագրւած տասնամեայ մի ուսումնասիրութիւն, — որպիսին ներկայանում է Էմին Յովսէփեանի՝ 700 մեծագիր երեսներից բաղկացած գիրքը, — անշուշտ կարող է մի լուրջ պատմական գործ լինել և թերեւ նոր ուղեցոյց հայ քաղաքականութեան համար։

Ենթագրում է, — և դա կարող է ճիշտ լինել, — որ անգլիական քաղաքագէտները՝ նպաստելով և առաջ քաշելով Էմին Յովսէփեանին՝ մատղիր էին հայերից և վրացիներից մի միացեալ անկախ իշխանութիւն հաստատել Ասիայում։ Եւ հէնց

Նպատակի իրագործման նիւթեր պիտի մա-
սակարարէր էմինի տասնամեայ ուսումնասիրու-
թիւնը:

Տարաբաղդաբար ուսումնասիրողի մահը մո-
ռացել տւեց այդ բանը:



ՀԱՅԵՐԻ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՋԱՐԺՈՒՄՆԵՐԸ
ԺԷ ԴԱՐՈՒՄ

(ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ԵՐՐՈՐԴ ՇՐՋԱՆԸ)

Ա.

Ուռսաց պատմութեան մէջ, Պետրոս Մեծից յետոյ, շատ պատւաւոր տեղ է բռնում Եկատերինա Երկրորդը կամ Մեծը, որ 1762 թ. յունիսի 28-ին Կայսերական գահի վրայ բարձրացաւ նախապէս տապալելով և աքսոր քշելով իր ամուսին Պեօտը Գ. ըրդ կայսրին:

Ինչպէս ներքին նոյնպէս և արտաքին քաղաքականութեան մէջ Ուռսաստանում Եկատերինա Բ. ը շատ մեծ դեր է խաղացել՝ շարունակ հետեւելով Պետրոս Մեծի վերանորոգչական ծրագըրներին, որոնք իր նախորդների օրով բարձիթողի էին արւած:

Ուռսիոյ այս հանճարեղ դշունեոյ ներքին քաղաքականութեան նկարագիրը իմ ծրագըրից դուքս է, իսկ արտաքին քաղաքականութեան վերաբերութեամբ՝ այսեղ կը յիշեմ նրա, այսպէս կոչւած, «հիւսիսային դրութիւնը»:

Յանուն Եւրոպայի քաղաքական հաւասարակցութեան՝ Եկատերինան ձեռնարկեց մի դաշնակցութիւն կազմել Եւրոպական վեց հիւսիսային տէրութիւններից, որ էին՝ Ռուսիան, Բրուսիան, Լեհաստանը, Շվեյցարիան, Դանիան և Անգլիան:

Դաշնակցութիւնը ուղղւած էր Աւստրիայի և Ֆրանսիայի դէմ:

Սակայն փորձը ցոյց տւեց, որ այդ դաշնակցութիւնը գլուխ գալու բան չէ, դաշնակիցների շահերի և ուղղութիւնների հակամարտութեան պատճառաւ:

Դեռ այդ բաւական չէ: «Հիւսիսային դրութեան» լոյս աշխարհ դալը՝ Ֆրանսիան գրգռեց Թիւրքային պատերազմ հրատարակելու Ռուսիայի դէմ, որի արժանապատռութիւնը չէր թոյլ աալիս ի հարկէ անպատասխան թողնել Թիւրքիայի այդ կոչը:

Այսպիսով ահա սկսւեցաւ ոռւստաճկական առաջին պատերազմը Եկատերինայի օրով 1768-ին:

Եւ այդ պատերազմը առիթ տւեց՝ Ռուսիային վերանորոգել իր յարաքերութիւնները Արեւելի քիչունեայ ազգի հետ:

Բ

Պատերազմը յայտարարելով՝ Եկատերինան, ըստ օրինակի Պետրոս Մեծին, դարձաւ Թիւրքիոյ հպատակ քրիստոնեայ ազգերին մի յատուկ կոչով, հրաւիրելով նրանց ներկայ պատերազմից

օգտւել և ապստամբելով Թիւրքիայի դէմ ամկախուրիւն ձեռի բերել իրենց համար:

Եւրոպայի պատերազմական բեմում Թիւրքիոյ ոյժը ջլատելու համար՝ ոռւս գիպլօմատիան վճռեց Վրաստանի կողմից և յարձակումն գործել Թիւրքիայի վրայ:

Այդ պատճառաւ Քարթալինայի և Կախէթի իշխան Հէրակլիին և Իմէրէթի իշխան Սօլօմոնին հրաւեր կարգացւեցաւ, որ նրանք միանալով՝ ընդհանուր ուժով թիւրքերի դէմ դուրս գան:

Եւ իբրև զեկավար և աջակից գրանց՝ 4000 հոգուց բաղկացած մի բանակ ուղարկւեցաւ Վրաստան գուրս Տօլէպէնի առաջնորդութեամբ. Իսկ ներկայացուցիչ կամ հաւատարմատար Ռուսստանի կողմից Վրաստանում՝ նշանակւեցաւ մի վրացի ոռւս պաշտօնայ—Նադվօրնի սովէտնիկ իշխան Մօռլաւենով:

Հէրակլիին և Սօլօմոնը ոռւս կառավարութեանը պատասխանեցին, որ իբենք նրա առաջարկը ընդունում են: Միայն թէ՝ այդ առաջարկը յաջողութեամբ գլուխ բերելու համար անհրաժեշտ է, որ ոռւս կառավարութիւնը նրանց ուղարկէ 15-ից մինչև 20 հազար գունդ (պոլկ) գորք և դրա ուտեստի և պահեստի համար հարկաւոր քանակութեամբ նաև դրամ:

Եկատերինան պատասխանեց, որ եթէ ինքը այդքան զօրք Ռուսաստանից ուղարկելու լինի, —այն դէպքում այլևս ոչ մի կարիք չի լինի վրացիների օգնութեանը: Ուստի և խորհուրդ

տւեց բաւականանալ դուքս Տօտլէպէնի 4000-նոց բանակով։

Հէրակլին ակամայից յանձն առաւ վրացական գնդով մասնակցել Տօտլէպէնի արշաւանքին Ախալցխայի բերդի վրայ։

Բայց փոխանակ ոռւսաց զօրքերին աջակցելու՝ վրացի զօրքերը սոսկ հանդիսատես եղան պատերազմին։ Մէկ էլ քաղաքի խաղաղ ժողովրդին կողոպտել սկսեցին։

Յուսախաբւած Հէրակլիի վարմունքից՝ Տօտլէպէնը Ախալցխայի բերդը թողած՝ անցաւ գնաց Իմէրէթիա-և այնտեղի բերդերի տաճիկ պահակախմբերի վրայ սկսեց յարձակումներ գործել։ Բայց Իմէրէթի Սօլօմոն իշխանը ևս այն դիրքը բռնեց, ինչ որ Հէրակլն էր բռնել։

Տօտլէպինի յուսախաբութիւնը այստեղ ևս, Իմէրէթիայում կատարեալ եղաւ։ Ուստի նա գրեց կայսրուհուն և խնդրեց, որ բոլոր վրաց ազգի աստիճանաւորները հեռացնեն իր կշտից։

Այս հանգամանքը առիթ դարձաւ Տօտլէպէնի և Հէրակլիի ու Սօլօմոնի առանց այն էլ լարւած յարաբերութիւններին առաւել ևս լարւելու։ Եւ դրա հետեանքն այն եղաւ, որ Հէրակլի ջանքերով ոռւսաց բանակում դաւադրութիւն կազմւեցաւ, Տօտլէպէնին ձերբակալելու, զօրավարութեան պաշտօնը նրանից վերցնելով՝ դաւադիրներից մէկին յանձնել և ոռւսաց հետ յարաբերութիւնը ընդհատել։

Սակայն Տօտլէպէնը վազօրօք գլխի ընկաւ,

թէ իրեն դէմ ինչ որոգայթ է լարւում, ուստի և, իր հերթում, որոշեց Հէրակլիից յետ առնելով Ս. Անդրէասի շքանշանը՝ ձերբակալել նրան և ուղարկել Ռուսաստան։ Իսկ իրեն հակառակ առտիճանաւորներին և իշխանաւորներին և իշխաններին, որքան հնարաւոր է, հուպ տալ և աշխատել վրացիներին ոռւսական հպատակութիւն ընդունել տալ։

Ք.

Եկատերինա կայսրուհին շատ զարմացաւ ու զայրացաւ Վրաստանում տեղի ունեցած այս անցքերի մասին, և թէպէտ նա ինքը և դուքս Պանինը հարկ եղած յանդիմանութիւններն ու նկատողութիւնները գրեցին Հէրակլիին և վրաց իշխաններին, բայց և այնպէս կապիտան Եազիկովին Վրաստան ուղարկեցին Տօտլէպէնին Հէրակլիի հետ հաշտեցնելու և գործին այնպիսի ընթացք տալու, որ վրացիք սրտանց և ջերմ օգնութիւն ցոյց տան ոռւսներին՝ միանգամայն ղեկավարելով կայսրուհու կողմից տրւած հըրահանգով, այնպէս որ «հոգին ոռւսական լինի, իսկ մարմինը՝ վրացական»։

Սակայն Եազիկովը չկարողացաւ իրեն տըրւած հրահանգը ի կատար ածել։

Այդ պատճառաւ Տօտլէպէնը յետ կանչւեցաւ և նրա տեղ նշանակւեցաւ գեներալ-մայեօր Սուխօտինը։ Բայց սա ևս անկարող գտնւցաւ Հէրակլիին և միւս իշխաններին գրաւել ոռւսաց կողմը,

Վրացիների ատելութիւնը՝ այս կէտին էր հասել, որ նրանք մինչև անգամ ոռւս զօրքին բաւականաչափ ուտեստ չէին տալիս և այլեալ զրկանքների էին ենթարկում:

Հէրակլը մինչև անգամ Ախալցխայի փաշային հետ հաշտութեան դաշն կոեց՝ միանգամայն հակառակ ոռւսական շահերին:

Եկատերինա Մեծը կորցնելով բոլորովին իր յոյսը թէ կարելի է վրացիների օգնութեամբ որևէ գործ կատարել թուրքաց դէմ,—ստիպւած եղաւ իր բանակը վրաստանից յետ կանչել,

Եւ առանց վրացիների օգնութեան յաջողեցաւ մեծ ջարդ տալ տաճիկների թէ ցամաքային և թէ ծովային ոյժերին և Քիւչիւկ Գայնարջի գիւղում, Դանուբ գետի ափին, 1774-ին տաճիկների հետ հաշտութեան թուղթը ստորագրեց ոռւսաց համար շատ ձեռնուու պայմաններով:

Միքանի տարի յետոյ, այն է, 1783-ին Ռուսաստանը, առանց պաաերազմի, տիրեց նաև Խրիմ թերակղուն, այնտեղից գաղթեցրած հայ և յոյն ժողովրդով. շէնացրեց նորանւած Դօնի և Աղովի աւագուստներն ու անապատները: Սև ծովի ափին միքանի քաղաքներ և նաւահանգիստներ շինեց, նաւատորմիդ կազմեց և սկսեց պատերազմական նորանոր և մեծ պատրաստութիւններ տեսնել՝ իրագործելու համար մի այլ և խոշոր քաղաքական ծրագիր, որ պատմութեան մէջ յայտնի է «յունական ծրացիր» անունով:

Դ

«Յունական ծրագիր»-ի նպատակն էր Աւրուրիայի հետ միանալով տաճկաց տիրապետութեանը վերջ տալ: Կ. Պօլսում նստացնելով օրթոգրուքութեան պատկանող մի կայսր^{*)} վերականգնել Բիւզանդական նախկին կայսրութիւնը: Իսկ Տաճկաստանի մնացեալ երկիրներն ու կղզիները բաժին-բաժին անել եւրոպական տէրութիւնների մէջ:

Գալով կովկասին և Անդրկովկասին՝ գրանցմով էլ պէս էր երկու փոքրիկ տէրութիւններ—կազմել Վրաստան եւ Հայաստան:—որոնք միմիայն Ռուսաստանից կախում պիտի ունենային:

«Յունական ծրագրի» միտքը պատկանում էր կայսրուհուն իրեն, իսկ նրա իրագործումը յանձնւած էր նրա մտերիմ իշխան Գրիգոր Պօտեօմիկինին, որին և պարտական էր Ռուսաստանը թիւրքիոյ դէմ ցարդ տարած յաղթութիւններով և վերոյիշեալ տիրապետութիւններով ու շինարարական գործունէութեամբ:

Զենարկելով «յունական ծրագրի» իրագործմանը Գր. Պօտեօմիկինը՝ իր ազգական գեներալ Պատել Պօտեօմիկին ուղարկեց կովկաս, ուստաց ձեռքն անցած Մօղոկեան գծի վրայ, որտեղից նա ծածկաբար բանակցելու էր վրա-

^{*)} Կայսրուհին մտադիր էր իր կոստանդին թուանից յատկացնել այդ տիտղոսը:

ցիների և Ղարաբաղի ու Ղարադաղի հայերի հետ՝ ապագայ վրացական եւ հայկական տէրութիւնները կազմելու վերաբերութեամբ,

Միևնուն նպատակաւ և միսախայով իշխան Պօտեօմկինը Աժդարիսան ուղարկեց նաև գեներալ Սուվորովին, հրահանգ տալով՝ որ ամենաճիշտ տեղեկութիւններն հաւաքէ Պարսկաստանի, Հայաստանի, Շիրվանի և Գիլեանի մասին և պարբերաբար հաղորդէ իրեն — Պօտեօմկինին:

Հերակլին և առհասարակ վրացիներին գրաւելու համար՝ իշխան Պօտեօմկինը ամեն տեսակ պարզեներով, տիտղոսներով և արտօնութիւններով նրանց սիրտը առաւ և Վրաստանը Ռուսաստանի հովանաւորութեանը ներքոյ ի պաշտօնէ ընդունելով և Հերակլին հաւատարմութեան երդում ընդունել տալով՝ 1783 թ. նեյեմբերի Յ-ին ռուսական գօրքի երկու գումարտակ մտցրեց Թիֆլիզ:

b

Երբ առաջին անգամ, 1769-ին, ռուս արքունիքը հրաւեր կարդաց Հերակլ և Սօլօմօն իշխաններին՝ թիւրքաց դէմ գլուխ բարձրացնել, միաժամանակ հրահանգ էր ուղարկել Հերակլին, որ աշխատի իր կողմից Արարատեան հայերին եւս ապստամբեցնել: Եւ Հերակլը խօստացել էր գրելով, թէ նա «հեշտութեամբ կգուգոէ հայերին դէնք բարձրացնել, մանաւանդ այն պատճառով,

որ միքանիսը նրանցից իր հպատակներն են և Քարթալինայից, Կախէթից և Արարատեան հայերից և այլ դրացի ազգերից նա կարող է 50,000 հոգուց բաղկացած գօրք կազմել:

Բայց ինչպէս ընթերցողը տեսաւ, Հերակլի և Տօտլէպէնի մէջ խոշոր տարածայնութիւններ ծագեցան, որոնք Եազիկօվի և Սուխօտինի միջամտութեամբ ևս չպարզւելով, չյարդարւելով ոռուսաց գօրքը Վրաստանից յետ կանչւեցաւ: Եւ հետևաբար Հերակլը այլևս կարիք չունէր հայերին գրգռելու և նրանցից ու միւս ազգերից 50,000-նոց բանակ կազմելու:

Բայց այժմ, երբ ոռուսաց և վրաց մէջ կատարեալ հաշտութիւն տեղի ունեցաւ, երբ Վրաստանը ի պաշտօնէ ոռուսաց հովանաւորութեան տակ մտաւ և երբ արդէն ոռուսաց երկու գումարտակ գօրքը հանդիսաւոր կերպով Թիֆլիզ մտաւ, — այժմ ի հարկէ աւելի հեշտութեամբ կարող էր Հերակլը հայերին գրգռել: Նամանաւանդ որ դեռևս Հերակլից առաջ՝ Պաւէլ Պօտեօմկին և Սուվորով գեներալներն արդէն ձեռնարկած էին, ի թիւս այլոց, հայերին ևս գրգռել և հայկական իշխանութեան խոստումով նրանց որսալ:

Բայց Հերակլիից էլ, Պաւէլ Պօտեօմկին և Սուվորով գեներալներից աւելի լաւ և ազգուկերպով հայերին գրգռեցին և նրանց սիրտն ու հոգին դէպի Ռուսաստանը գրաւեցին Յովհաննէս Լազարեանը Պետերբուրգից և իշխան Պօտեօմ-

կինի յատուկ հրահանգով՝ Անդրկովկասի բժիշկ Ռէյնէգուր, որ անձամբ անձին այցելեց Ղարաբաղի մելիքներին և պատերազմելու ընդունակ հայերի ցուցակը կազմեց:

Այս ամեն նախապատրաստական միջոցներով չբաւականանալով՝ իշխան Պօտեօմկինը միանոյն ժամանակ թէ գրաւոր և թէ բանաւոր բանակցութիւնների և խորհրդածութիւնների մէջ մտաւ ռուսահայերի առաջնորդ Յովսէփ արքեպիսկոպոս Արդութեանի հետ առ այն, թէ «ինչ հնարք պէտք է գործ դրւի Հայաստանը ձեռք բերելու համար», որպէսպի յետոյ կարելի լինի հայկական իշխանութիւն կազմել:

Այսպէս ահա նորից հրապարակ եկաւ ԺՈ դարու վերջերում «հայկական հարցը» արդէն իր երրորդ շրջանում, որը և կազմելու է ներկայ յօդւածիս նիւթը:

Հայկական հարցի այս շրջանում գործող հայերի պարագլուխը վերսոյիշեալ Յովսէփ արքեպիսկոպոս Արդութեանն է, ապա, երկրորդարար, դալիս են Յակոբ Շահամիրեան, Յովհաննէս Լազարեանը, Ստեփան Դաւթեանը և ուրիշները:

Զ

Յովսէփ արքեպիսկոպոս Արդութեանը 1773 թւին ռուսահայերի առաջնորդ նշանակւելիս՝ առաջին անգամից դէպի ինքը դրաւեց իշխան Պօտեօմկինի և նոյնիսկ Եկատարինա Բ-ի ուշադ-

րութիւնը, իբրև մի անձն, որ ծանօթ և տեղեակ է Տաճկաստանի և Պարսկաստանի պայմաններին և տեղական լեզուներին։ Ունենալով Թիֆլիզում բազմաթիւ ազգականներ և Հէրակլի ու միւս իշխանագունների հետ մօտիկ յարաբերութեան մէջ գտնւելով, Յովսէփ Արհին իշխան Պօտեօմկինի յանձնարարութեամբ մասնակից եղաւ Վլարաստանը Ռուսիոյ հովանաւորութեան տակ ընդունելու խնդրումը և ռուսաց զօրքի հետ Թիֆլիզ գալով՝ մեծապէս նպաստեց ինչպէս վրաց, այնպէս և տեղւոյն հայոց ժողովրդին՝ սրտանց կապւելու ռուսաց հետ։

Իշխան Պօտեօմկինի յանձնարարութեամբ էր, որ Յովսէփ արքեպիսկոպոսը Խրիմից 20000 հայ գաղթեցնել տւեց Պօտեօմկինի նորանւաճ երկիրը՝ Աղօվի և Դօնի ափերում։*)

Նոյն Արհին էր, որ 1777-ին մասնակից եղաւ Պօտեօմկինի արշաւանքին տաճիկների դէմ և տեղւոյն հայերի աջակցութեամբ՝ մեծապէս նպաստելով ռուսաց զէնքի յաջողութեանը՝ պատերազմի վերջանալուց յետոյ՝ Մոլդավիայի և Վալախիայի հայերին գաղթեցրեց դէպի Ռուսաստան և այնտեղ հիմնեց Գրիգորիոպոլ քաղաքը իպատիւ իշխան Գրիգոր Պօտեօմկինի։

Դարձեալ Յովսէփ արքեպիսկոպոսն էր, որ կայսրուհու յատուկ հրամանաւ մասնակցեցաւ

*) Այդ գաղթականութեան մասին ես մանրամասնորէն գրել եմ իմ «Պատմական քաղաքածների» առաջին պրակում։

ռուս-պարսկական պատերազմին 1796 թւում
և բոլոր ժամանակը Պօտեօմկինի մօտ լինելով՝
յաջողութեամբ կատարում էր նրա յանձնարա-
րութիւնները՝ սահմանակից խաների հետ բա-
նակցութեան մտնելով, ոռուսաց հակառակ նրանց
բոնած գործերը խափանելով, նրանց գրաւելով
և սիրաշահելով և վերջ ի վերջոյ, առանց առան-
ձին ընդդիմութեան նրանց Ռուսիոյ հովանաւո-
րութեան ներքոյ ընդունելով և նրանց բերդերին
տիրանալով, և այլն և այլն:

Է

Յովսէփ արքեպիսկոպոսի այս ամեն ծառա-
յութիւններին մասնակից էր լինում գրեթէ միշտ
Յովհաննէս Լազարեանը թէ իբրև թարգման և
թէ իբրև էջմիածնի կաթողիկոսի հաւատարմա-
տարը կամ վերիլլ:

Մասնակցում էր յաճախ նաև ոմն Ստեփան
Դաւթեան՝ «Արարատեան գեսպան» անունով, որ
երկար տարիներից վեր ոռուսաց գաղոնի գոր-
ծական էր Պարսկաստանում:

Հէնց այս Ստեփան Դաւթեանի միջոցաւն
էր, որ Ղարաբաղի մելիքները գրաւորապէս խըն-
դրում էին Թիֆլիզ եկած Պաւէլ Պօտեօմկինի
միջնորդութիւնը կայսրուհու առաջ՝ Ղարաբաղը
իր հովանաւորութեան ու պաշտպանութեան տակ
ընդունելու:

Իշխան Գր. Պօտեօմկինը Ղարաբաղի մելիք-
ների սոյն խնդիրն ընդունելով՝ Յովսէփ արքե-

պիսկոպոսից հետեւեալ հարցերի պատասխանները
պահանջեց:

1) Մեծ Հայաստանի ժողովուրդը՝ երկար
ժամանակ տաճիկների և պարսիկների ձեռքերի
տակ ճնշւած լինելով՝ արդեօք ունի՞ հարկաւոր
չափով հոգեկան ոյժ՝ ազատութեան ձգտելու
համար:

2) Երկարատև հալածանքներն ու կեղեքում-
ները արդեօք ժողովրդից սրտից չեն ջնջել ազ-
նիւ զգացմունքները:

3) Արդեօք հայերի մէջ հաւատը զօրե՞ղ է,
կարելի՞ է նրանով ժողովրդի սիրտն ու հոգին
արթնացնել:

4) Կաթողիկոսական աստիճանը ո՞ր աստի-
ճան յարգի է հայերի մէջ:

5) Մելիքները պատշաճաւոր ակնածութիւն
և յարգանք տածնեւմ են դէպի սրբազն աստի-
ճանը:

6) Ժողովուրդը հնագանդ և հլու է մելիք-
ներին:

7) Ի՞նչ միջոցներով կարելի է ժողովրդին
հաճոյանալ և մելիքների հաւատարմութիւնը և
հոգեորականութեան համակրութիւնը գրաւել:

8) Հայերին պատկանեալ երկիրն այժմ ում
ալիրապետութեան տակ է գտնւում:

9) Ղարաբաղում քանի՞ մելիք կայ և որքան
ժողովուրդ:

10) Զօրքի և ձիերի համար հարկաւոր և
բաւականաչափ պաշտպանութեան:

Հ

Յովսէփի արքեպիսկոպոսը մի տեղեկագրով պատասխանեց իշխան Պօտեօմկինի վերոյիշեալ հարցերին, տեղեկազրի մէջ ընդարձակ տեղ տալով Ղարաբաղի մելիքների և Պետրոս Մէծի մէջ եղած յարաբերութիւններին և բացատրելով մելիքների այժմեան ցանկութիւնը, որ էր «նորոգել ի մեզ զմասնաւոր սէրութիւն ի Մէծն չայսաւն ի բաղաժն երեւան»:

Առ այդ Պօտեօմկինը «պատասխանեց թէ՝ կարելի է, բայց պիտոյ է պատրիարքն ձեր քանիօք իշխանօք խնդիր ի դորձ ածիցեն վասն փրկութեան ձերոյ, որ մեք այսու ի յօդնութիւն ձեր եկեսցուք»:*)

Յովսէփի արքեպիսկոպոսը յանձն առաւ բանակցել Արարատեան և Աղւանից կաթողիկոսների հետ այդ մասին և յաջողեցաւ:

Կաթողիկոսները միմեանց հետ պայմանակցեցան, որ իրենք ոռուաց զօրքի համար հարկաւոր բանակութեամբ պաշարի պատրաստութիւն տեսնեն. և հէնց որ ոռու բանակը դէպի Հայաստան շարժեցաւ, — իրենք հայ մելիքներով և հայ զօրքերով միանան նրա հետ:

Պօտեօմկինը որոշած էր Պարսկաստանի վրայ յարձակւել 1784թ. և արդէն ամեն տեսակ պատւէրներ տւած էր իր ազգական Պաւէլ Պօ-

*) Դիւան հ. Պատմ. գիրք թ. եր. 24

տեօմկինին, ուղարկելով նրան և 59,000 Հոլանդիայի պաճախլի ոսկի:

Այս մասին Պաւէլ Պօտեօմկինը հաղորդելով հայոց կաթողիկոսներին և մելիքներին՝ առաջարկեց, որ կազմ ու պատրաստ լինին, որովհետեւ ինքը շուտով գալու է Բարձրագոյն հրամանի համաձայն իրենց ազատելու մահմեղականների լծից:

Էջմիածնի կաթողիկոսը թերահաւատութեամբ ընդունեց այս լուրը, ուստի և տեղիցը առայժմ չշարժւեց: Իսկ Աղւանից Յովհաննէս կաթողիկոսը և Ղարաբաղի մելիքները հաւաքւցան իսկոյն Գանձասարի վանքը և միահամուռ և համերաշխ կերպով խաչի ու աւետարանի վրայ երգւելոց յետոյ՝ ստորագրեցին և Պաւէլ Պօտեօմկինին ուղարկեցին այն համախօսական թուղթը, որով իրենց պատրաստակամութիւնն ու անձնւիրութիւնն էին յայտնում ուստական գահոյքին:

Համախօսական ստանալուց յետոյ՝ Պաւէլ Պօտեօմկինը պահանջեց, որ մելիքների կողմից իրեն ներկայանայ «մի յայտնի եւ համբաւաւոր անձն եւս»: Սակայն մելիքները պատասխանեցին, թէ քանի որ իրենք իրենց բանակցութիւնները ուստաց հետ խանից ծածուկ են անում, այժմ չեն կարող «մի յայտնի և համբաւաւոր անձն եւս» ուղարկել ուստաց բանակը, քանի որ նա գեռ տեղիցը չէ շարժւել:

Այդ նշանակում է այժմեանից և եթ մե-

միքներին և նրանց ժողովրդին՝ պարսից սրերին յանձնել:

«Յայտնի և համբաւաւոր անձն» ասելով ոռւս զօրավարը ուզում էր, որ էջմիածնի կաթողիկոսի կողմից ևս գոնէ մի ներկայացուցիչ ուղարկւի իրեն։ Եւ կարծում էր, որ Աղւանից կաթողիկոսն և Ղարաբաղի մելիքները կաշխատեն համոզել էջմիածնի կաթողիկոսին։ Բայց երբ մելիքների բացասական պատասխանը ստացւեց՝ Պատէլ Պօտեօմկինը դարձեալ Յովսէփի արքեպիսկոպոսի օգնութեանը դիմեց և նա յաջողեցաւ. Հայաստանից բերել տալ՝ իբրև էջմիածնի կաթողիկոսի ներկայացուցիչ՝ Ստեփան Դաւթեանին, որին այդ օրւանից «Արարատեան դեսպան» մակդիրը տրւեցաւ։

Թ.

Այսպիսով հայերը ոռւս կառավարութեան բոլոր պահանջները կատարելով՝ սրտատրով ըսպասում էին 1784 թւականին, երբ ոռւս բանակը Պարսկաստան մտնելով՝ արդարացնելու էր նրանց երկարամեայ բաղձանքը՝ տեսնել Հայաստանը մահմեդականներից մի անկախ իշխանութիւն։

Բայց այդ յոյսով ապրում էին ոչ միայն պարկահայերն, այլ նոյնիսկ հեռաւոր հնդկահայերը։ Եւ նրանք Հայաստանի անկախութեան նկատմամբ՝ Յովսէփի արքեպիսկոպոսից յաճա-

խակի ստացած հաւաստիացումներով այն աստիճան ոգեսրւած ու գօտեպնդւած էին, որ յիշեալ Արհեոյ կողմից Հնդկաստան գնացած նւիրակներին տալիս էին առատօրէն իրենց գրամտկան նւէրներն ու ակնեղէնները, որոնցմով Արդութեան Արհին սիրաշահում և գրաւում էր իշխան Պօտեօմկինին և Հայաստանի անկախութիւնը ցանկացող նրա պաշտօնակիցներին։*)

Հայաստանի անկախութեան գաղափարով հնդկահայերը այն աստիճան տարւած էին և

*) Աժդարիսանի իր գործակատարներին Պետերբուրգից գրած մասնաւոր նամակներում Յովսէփի արքեպիսկոպոսը պահանջում էր որ իրեն շատ փող ուղարկեն՝ յայտնելով որ «Մեր գործի (Հայաստանի վերականգման) վերջնական վճիռն՝ այսօր վաղն է ձըգւում։ Իսկ այստեղ ամեն բան թանգ է և իշխանն իր մարդիկներով համարեա թէ ամեն օր ինձ մօտ են ճաշում... իշխանը սիրում է ընծաներ...»։

Այդ պատճառակ՝ Յովսէփի Արհին Հնդկաստանից և Պարսկաստանից իշխանի համար բերել էր տալիս թանկագին զմրուխտներ, գոհարեղէններ և Քիրմանուշալեր. իսկ Աժդարիսանից՝ զուրգել, խաւիար, շամայի, որոնցով մեծարում էր Արհին ոչ միայն իշխան Պօտեօմկինին, այլ նաև նրա մերձաւորներին ու Պլատոն միտրոպոլիտին և ուրիշներին։ Արդութեանից ստացած ընծաներն յաճախ այնքան թանկարժէք և հազւագիւտ բաներ էին լինում, որ նրանց մի մասը Պօտեօմկինը իր կողմից նւէր էր ուղարկում կայսրունուն, ժառանգին և թագաւորական տան միւս անդամներին։

Իրենց հերթում կայսրունին և Պօտեօմկինը շըքանշաններով և այլ պարգևներով սիրաշահում էին

այնքան հաւաստի ու վստահ, որ նրանցից մինը,
Յ. Շահամիրեանը շտապել էր օր առաջ «որոգայր փառաց» վերնագրով մի գլոբ հրատարակել, որի մէջ դուրս են բերւած հայոց և վրաց միացեալ անկախ տէրութեան ներքին կազմակերպութեանց ձևերը, հոգնոր, զինւորական և քաղաքական հիմնական օրէնքները և այլն:

Շահամիրեանը իր այս օրէնքիրքը անգլիերէնից էր թարգմանել և ոգենքրւած այս միացեալ կառավարութեան բարձրագոյն իշխանութեամբ՝ գահն առաջարկում էր վրաց Հէրակլին, բայց նրան ևս ենթարկելով սահմանադրական կառավարութեանը, վերին և ստորին պալատներին և այն:

«Որոգայթ փառաց»-ից Շահամիրեանը երկու օրինակ ուղարկել էր Յովսէփ արքեպիսկոպոսին, որ մի օրինակը ներկայացրեց Եկատերինա կայսրուհուն և միւսը Հէրակլին:

Սակայն Յովսէփ Արհին համամիտ չգտնւեցաւ Շահամիրեանին՝ միացեալ իշխանութեան գահը Հէրակլին յանձնելու համար:

Յովսէփ արքեպիսկոպոսին: Նա արձակ մուտք ունէր կայսերական պալատը, ուր միշտ պաշտօնական ճաշերին մասնակից էր լինում: Նրա բնակարանի առաջ միշտ պահակներ էին լինում կանգնած, ուր որ նա երեալ, զինւորները փողիարութեամբ էին ընդունում: Իսկ երբ Արհին պատարագ էր մատուցանում հայոց եկեղեցում, կայսրուհին և Պօտեօմկինը միշտ ներկայ էին լինում:

Նորին բարձր սրբազնութեան ցանկութիւնն այն էր, որ միացեալ անկախ իշխանութեան գահի վրայ նստի պայծառափայլ իշխան Գր. Պօտեօմկինը՝ գլխաւորապէս երկու պատճառաւ:

Նախ՝ որովհետեւ միացեալ անկախ իշխանութեան մտքի հեղինակը նա ինքն էր, իշխան Պօտեօմկինը: Եւ հէնց ինքն էլ էր լինելու այդ մտքի իրագործողը: Եւ երկրորդ՝ իշխան Գր. Պօտեօմկինը շատ հայասէր էր, — այնքան հայասէր, որ իր անկւանակից և Հայոց Լուսաւորիչ և Պրեգորին իրեն պատրօն ու պահապանն էր համարում և իր տօնախմբութիւնը կատարում էր միշտ սեպտեմբերի 30-ին, այսինքն այն օրը, երբ ուռաց եկեղեցին և Գ. Լուսաւորչի տօնն է տօնում:

Ժ

Այսպէս՝ մինչդեռ Յակոբ Շահամիրեանն ու Յովսէփ արքեպիսկոպոս Արղութեանը մի կողմից՝ անկախ Հայաստանի գահակալի անձնաւորութեան մասին էին հոգում, իսկ միւս կողմից Արլանից Յովսաննէս կաթողիկոսն ու Ղարաբաղի մելիքները ուսւ կառավարութեան և գօրավարների հետ ունեցած իրենց գաղտնի բանակցութիւններն վերջացած համարելով՝ անհամբեր սպասում էին, թէ ահա շուտով կգայ իշխան Պօտեօմկինի զօրաբանակը և Հայաստանի անկախութիւնը կհրատարակէ, — յանկարծ երկեցաւ,

որ Ղարաբաղի Իբրահիմ խանը շատ լաւ տեղեակէ Յովիաննէս կաթողիկոսի և մելիքների ու ոռւս կառավարութեան մէջ կատարւած բանակցութիւններին։ Եւ մինչև անգամ գաղտնի դրագը բութիւնների մի մասը իրեն ձեռքին ունի։

Ուստի հէնց որ կաթողիկոսն ու մելիքները իրենց բանակցութիւնները վերջացած համարելով սուս ու փուս իրենց տներում նոտած էին, յանկարծ իրենք իրենց շրջապատած գոտան պարսիկ զինւորներով։

Իբրահիմ խանը Յովիաննէս կաթողիկոսին խեղամահ արաւ, մելիքներին բանտ ձգեց շրջայակապ և նրանց կալւածները գրաւեց։ Այնուհետև սկսաւ որոնել և գտնել կաթողիկոսի և մելիքների գործակիցներին՝ այլ և այլ նեղութիւններ և տանջանքներ տալով ժողովրդին։*)

Մելիքները մի կերպով կարողացան բանտի միջից մի խնդիր ուղարկել ուռւսաց կայսրուհուն, որին աղաջում-պաղատում էին իրենց օգնութեան հասնել և մի փոքրիկ գումարտակ ուռս զօրք ուղարկել Ղարաբաղ, որտեղի հայերը միանալով նրանց հետ՝ ձեռաց կխորտակեն Իբրահիմ խանի զօրութիւնն ու իշխանութիւնը։

Նոյնպիսի միջնորդութիւն արաւ նաև Յովսէփ արքեպիսկոպոսը, հաւասարիացնելով կառա-

*) Այդ միջոցին Աւարիայի Օմար խանն և յարձակւեցաւ և կոտորեց Բօրչալուի, Լոռուայ և Ախալցխայի հայերին։

վարութեանը, որ Ղարաբաղ ուղարկւելիք գումարտակի համար տեղւոյն հայերը՝ բանտարկւած մելիքների կարգադրութեամբ հաց, ձուկ և այլ ամեն պաշարեղէն արդէն պատրաստել պրծել են։

Իր դրաւոր գիմումին պատասխան չստանալով Յովսէփ արքեպիսկոպոսը անձամբ մեկնեցաւ Կովկասեան գիծը, տեսնեցաւ զօրավար Պաւել Պօտեօմկինի հետ։ Այստեղից քանիցս անգամ զրեց իշխան Գր. Պօտեօմկինին։ Բայց Արհւոյ ամեն աշխատանքն էլ ի զուր անցաւ։*)

Ուր ուրեմն Պետերբուրգից հրամայւեցաւ Հէրակլ իշխանին, որ վերցնելով իր իշխանութեան տակ գտնւած փոքրաթիւ ուռս զինւորներն և 5000 վրացի զօրքն ու հայոց մելիքների զինւորներն և իշխան Օրբէլեանի հրամանատարութեամբ զնայ Ղարաբաղ և Իբրահիմ խանի իշխանութեանը վերջ դնէ։

Եւ հէնց այն է, որ ուռս և վրացի զօրքը Պանձակին էր մօտենում, այնտեղից Ղարաբաղ մտնելու համար, և ահա յանկարծ իշխան Պօտեօմկինից հրաման եկաւ, որ զօրքը իսկոյն յետ դառնայ Ռուսաստան, որ Տաճկաստանի հետ նոր և երկրորդ պատերազմի էր ըսնւել 1786 թւին։

Իշխան Պօտեօմկինի այս կարգադրութիւնը կայծակնահար արաւ Հէրակլին, և նամանաւանդ հայոց մելիքներին։

*) Ինչպէս ի զուր անցան նաև Ստեփան Դաւթեանի միջնորդութիւնները՝ Բօրչալուի և Ախալցխայի հայերին օգնութեան հասնելու համար։

Հէրակլը Թիֆլիդ դարձաւ։ Նրա հետ միասին այստեղ գնացին նաև երկու հայ մելիքներ, որոնց հպատակներից 500 ընտանիք փախան, գնացին և Գանձակի խանին ապաւինելով իրենց բնակութեան տեղ ընարեցին Շամքօրը, Գանձակի և Վրաստանի մէջտեղում։ Վերջում Շամքօր եկան նաև փախած մելիքները։

Լսելով այս՝ Իբրահիմ խանը Գանձակի խանից պահանջեց յետ ուղարկել իրեն փախստական մելիքներին։ Գանձակի խանը չյօժարւեց։ Իբրահիմ խանի խնդրանօք՝ Գանձակի խանին դիմեց նաև Հէրակլը և խնդրեց հայ փախստական մելիքներին ուղարկել Ղարաբաղ, Եթէ որ Իբրահիմ խանը յանձն տոնէ վերադարձնել իրեն, Հէրակլին, Վրաստանից Ղարաբաղ փախած Բօրչալուեցի վրացհապատակ 200 տուն թուրքերին։

Գանձակի խանը Հէրակլի խնդիրը ևս մերժեց։

Այն ժամանակ Իբրահիմ խանը մեծ զօրքով Գանձակի վրայ խաղաց բռնութեամբ հայ մելիքներին կորզելու։

Սակայն մելիքները Հէրակլի դաւաճանական վարմունքից վերին աստիճանին զայրացած և Գանձակի խանի վեհանձնութեամբ սրտապնդւած հաւաքեցին իրենց զինւորներին և մեծ ջարդ տալով Իբրահիմ խանի բանակին՝ ցաք ու ցրիւ արին նրան։

Իբրահիմ խանը վրէժխնդրութեամբ լցւած՝ ուղում էր նորից և նոր ուժով Գանձակի վրայ

դալ, սակայն այդ միջոցին լոյս ընկաւ ներքինի՝ Աղա Մահմադ խանը։ Եւ Իբրահիմ խանը նրա երկիւղից ստիպւած եղաւ առաջմ մոռագութեան տալ հայոց մելիքներին։

ԺԱ

1786-ին սկսւած ուսութանակական երկրորդ պատերազմը՝ «յունական ծրագրի հետեանքն էր դարձեալ։

Տաճկաստանը տեղեակ լինելով այդ ծրագրին և տեսնելով Ռուսիայի մեծամեծ պատրաստութիւնները Սկ ծովի ափին, — շատապեց օր առաջ պատերազմը հրատարակել, քանի որ Ռուսիան գեռնս իր պատրաստութիւնները չէր վեջացրել։

Պատերազմի առաջին ամիսները Ռուսատանի համար անյաջող անցան։ Եւ այդ պատճառաւ իշխան Պօտեօմկինի սիրաը շատ կոտըւեց։ Սակայն երբ զօրքի հրամանատարութիւնը Պօտեօմկինը Սուվորովին յանձնեց, ուսւաց բաղը սկսաւ բանիլ։ Բայց որովհետեւ «յունական ծրագրի» նկատմամբ դաշնակից Աւատրիան զլացաւ կատարեալ օգնութիւն ցոյց տալ Ռուսատանին, ուստի վերջինս ստիպւած եղաւ վերջ տալ պատերազմին 1791-ին Եաշ քաղաքում կուած հաշտութեան դաշնագրով։

Այսպիսով «յունական ծրագիրը» ևս «հիւսիսալին զրութեան» վիճակին ենթարկւեցաւ, այսինքն անկարելի եղաւ իրագործել։

Դեռ աւելի վատ:

Աւստրիայի և Ռուսիայի մէջ «յունական ծրագրի» պատճառաւ տեղի ունեցած սառնութիւնը տեսնելով «հիւսիսային դրութեան» նախկին դաշնակիցներից ոմանք սկսեցին հակառակ դիրք բռնել դէպի Ռուսաստանը:

Այսպէս վարւեցան և Բրուսիան ու Շվեդիան:

Վերջինիս նաւատորմիզը 1789 թւին մինչեւ անգամ Պետերբուրգի վրայ յարձակւեցաւ, թէ պէտ և ատարդիւն: Այսպէս որ վերջ ի վերջոյ Եկատարինա Բ-ը սահմանադ եղաւ 1790-ին հաշտութիւն կայացնել և Շվեդիայի հետ:

ԺԲ

1788 թւի սուստաճկական պատերազմի ժամանակ՝ Յովսէփ արքեպիսկոպոս Արզութեանը Պօտեօմկինի հետ էր դարձեալ, և շարունակում էր նրա ցուցումներով գործել յօդուա սուստաց զօրքի յաջողութեան և յաղթանակի, որոնցից կախւած էր Հայաստանի անկախութեան խնդիրը, որ այնքան փայփայում էր Յովսէփ Արհին՝ միշտ յոյս ունենալով իշխան Պօտեօմկինի խոստումներին:

Եւ թէպէտ, ինչպէս տեսանք, այս երկրորդ պատերազմում Պօտեօմկինի գործն այնքան էլ յաջող չէր գնում, — այնուամենայնիւ Յովսէփ արքեպիսկոպոսը միանգամայն վատահ լինելով, որ յաղթանակը, վերջ ի վերջոյ, սուստաց կողմին է

մնալու, վութացել էր, կայսրուհու և իշխան Պօտեօմկինի նախընթաց յօժարութեամբ, ուրւագծել այն դաշնակցութիւնը, որ պէտք է կապէցր սուստաց և հայոց մէջ:

Այդ դաշնակցութեան ծրագիրը ուրւագծւած է 1789 թւին և բաղկացած է 18 յօդւածներից:

Ահա այդ ծրագիրը, որ ես պլաբառ բնագրից վերածում են աշխարհաբառի:

ԺԳ

Ա.) Ամեն բանից առաջ թող երկու ազգերի մէջ սէր հաստատեի համաձայն Փրկիչի ասածին թէ՝ «գուք ամենքդ էլ եղբայրներ էք»: Մեր կրօնի և եկեղեցւոյ օրէքների վերաբերութեամբ ոչ սուսները պէտք է խարութիւն դնեն, ոչ էլ մենք նրանց կրօնի և եկեղեցւոյ օրէնքների վերաբերութեամբ: Որովհետեւ ինչպէս առաքեալն ասում է (Պաղ. է 6): «Քրիստոնէութիւնը սիրով յաջորդւած հաւատ է»: Ուրեմն երկու ազգերս էլ (սուսներն ու հայերը) համարւում են միենայն կրօնի եկեղեցւոյ ծնունդ՝ հիմուած Փրկչի այն խօսքերի վրայ, թէ սորանով պէտք է մարդիկ ճանաչեն, թէ զուք իմ աշակերտներն էք, եթէ որ մէկզմեկու սիրէք»: Դրա համար էլ համարձակ կերպով պէտք է մուտ և ել առնել միմեանց եկեղեցիներում, որպէսպի խոռվութեան ոչ մի նիւթ չմնայ մէջ-աեղում: Որովհետեւ երկու ազգերս էլ միանման դաւանում ենք սուրբ Երրորդութիւնը և բանին

Աստուծոյ մարդեղութիւնը՝ Աստւած և մարդ կատարեալ, որ մեզ համար չարչարւեցաւ, ինչպէս որ «Հաւատամքի» մէջ էլ խոստովանում ենք թէ մենք և թէ նրանք: Իսկ «Հաւատամքը» բոլոր քրիստոնեայ ազգերի դաւանութեան հիմքն է:

Բ) Երկու ազգերիս մէջ լոյս ընկած հերձւածողների հետ՝ յարաբերութիւն (հաղորդութիւն) չունենալ, իբրև սիրոյ և խաղաղութեան պղտորողների և խռովարարների:

Գ) Եթէ տաճիկներից և հեթանոսներից քրիստոնեայ դառնալու ցանկացողներ եղան, որ ազգի հաւատին որ կամենան, այն ազգի եկեղեցումն էլ պէտք է մկրտեն, առանց միւս ազգի եկեղեցւոյ պաշտօնէի կողմից արդելքի կամ գայթակղութեան հանդիպելու:

Դ) Երկու թագաւորութիւնների մէջ եղած դաշինքը մշտնջենական է լինելու:

Ե) Հայաստանում չափաւոր ոռուս զօրք է մնալու մի գեներալի հրամանատարութեամբ, որ պէսզի երկիրը և ազգը պահէ պարսից և օսմանցւոց երկիւղից: Իսկ հայոց թագաւորի ժառանգներից մինը միշտ կայսեր դրան մօտ լինելու է:

Զ) Մեր հպատակութիւնը այնպէս պէտք է լինի, ինչպէս երբեմն լինում էր յոյների և պարսիկների ժամանակ, այսինքն մենք ոռուսներին հարկ տանք և ոսկի ու արծաթի հանքերից: Բացի դրանից՝ պատերազմի ժամանակ միմեանց

օգնութիւն հասնենք, որքան որ հարկը պահանջելու լինի:

Է) Որովհետեւ ամենողորմած և Օգոստափառ կայսրուհին կամենում է մեր տարաբաղդ աշխարհին օգնութիւն անել և մեր կործան: ած թագը նորոգել, ուստի և մեր թագաւորի ընտրութիւնը թող միմիայն նրա կամքիցը կախւած լինի կամ մեր ազգայինների միջից և կամ իր դուն հաւատարիմներից:

Ը) Ով էլ որ մեզ թագաւոր լինի, — պէտք է լինի հայոց օրէնքով, թագաւորական Վաղարշապատ քաղաքում և Ս. Էջմիածնում օծւի, ինչպէս որ անում էին մեր նախնի թագաւորները:

Թ) Թագաւորանիստ քաղաքը պէտք է լինի Այրարատ գաւառի կամ Վաղարշապատ քաղաք և կամ Անին:

Ժ) Թագաւորական օրդէն (նշան, գերբ) պէտք է լինի Նոյի տապանը, իսկ ժապաւէնը երեք գոյնանի, այն է՝ կարմիր, կանաչ և կապոյտ. աղեղի գոյնով, որ ջըհեղեղից յետոյ՝ Աստւած Նոյին աւեց ի նշան հաշտութեան:

ԺԱ.) Եթէ ուրիշ պատւանշան ևս սահմանվի, պէտք է սուրբ Լուսաւորչի պատկերով լինի, իսկ ժապաւէնը ըստ կամաց:

ԺԲ.) Առաջնակարգ պատւանշան պիտի հաստատի Քրիստոսի դաստառակի օրինակով, որ մեր Աբգար թագաւորին ուղարկւեցաւ, Այս պատւանշանը կարմիր ժապաւէնով միմիայն յաղթութիւն անողին է արւելու:

ԺԳ) Թագաւորական զրօշը մեր առաջին Արշակունի թագաւորների սովորութեան համաձայն՝ միզլսանի արծիւ է լինելու, ինչպէս որ էր հեթանոսութեան ժամանակ: Յետոյ լինելու է գառն, ինչպէս որ քրիստոնէութեան ժամանակ, ապա երկու առիւծ, ինչպէս որ Փոքր Հայատանումն էր լինում: Ահա այս նշաններով պէտք է դարձարելն մեր թագաւորական հանգերձները, դրօշակներն ու դրամները:

ԺԴ) Եթէ մեր առաջին նախարարների և իշխանների սերնդից լոյս ընկան մարդիկ և վըկայութեամբ հաստատեցին, այդպիսիններին պէտք է վերադարձւի իրենց նախնիների պատիւն ու նախագահութիւնը:

ԺԵ) Մեր իշխանութիւնը նորոգւելուց յետոյ իշխանները սարուկներ չպիտի ունենան, որ կարողանան մէկ-մէկ ծախել նրանց: Այլ պէտք է այնպէս լինին, ինչպէս որ լինում էր մեր և օսմանցիների ու պարսիկների թագաւորութեան ժամանակներումը, որ ժողովուրդը միմիայն թագաւորին էր ծառայում: Եւ երբ թագաւորը կամեցաւ մի իշխանի մի գիւղ ընծայել և այդ իշխանը կամեցաւ ծախել, նա ոչ թէ գիւղը բնակիչներով ծախելու իրաւունք ունի, այլ գիւղը իր կալւածով, այսինքն հոգովն ու ջրով, ինչ որ մարդիկ են մշակում: Արշակունիաց թագաւորութեան անկումից յետոյ, երբ յոյները աիրեցին մեզ, կամեցան մեզ իրենց իշխանների ծառայ (ստրուկ) ճանաչել բայց մեր ազգը մեր-

ժեց յոյներին և նախապատիւ համարեց Բաղդադի խալիֆայի իշխանութեան ներքոյ մանելով ազատ ապրել:

ԺԶ) Վաճառականութեան համար երկու ազգերուս մէջ պէտք է օրէնք սահմանել և իւրաքանչիւր վաճառելի ապրանքի համար մաքս նըշանակել: Կասպից ծովի ափին մեզ պէտք է նաւահանգիստ յատկացնել:

ԺԷ) Փախուստ տևող զինւորների և հպատակների համար օրէնք պէտք է սահմանել: Նոյնպէս և պէտք է սահմանել, թէ ինչ ձեռվ պէտք է ընդունենք մենք սուսներին և պատւառը անձինքներին:

ԺԸ) Կաթողիկոսի ընտրութիւնը մեր թագաւորի առաջարկութեամբ պիտի լինի և ընտրութիւնը կատարւի ամբողջ ազգի կողմից:

Որովհետեւ պայծառափայլ Գրիգոր Ալէքսանդրովիչ Պօտեհոմկինը մեր ազգի յատուկ խընամակալն է, որ այս գործին կարգադրիչ է ամենաողղումած կայսրուհու հաճութեամբ, և ինքը մեր ազգի բարերարն է, —ուստի նա ինչ որ անօրինէ, այնպէս պիտի լինի, որովհետեւ մարդարակէր կայսրուհու ողորմութեան շնորհը նրա Պօտեհոմկինի միջնորդութեամբ է լինելու, ինչպէս որ Աստւածութեան շնորհը տրւամ է մարդկանց հրեշտակների միջնորդութեամբ:

Այս գաշնազգիրը Յովաչի արքեպիսկոպոսը ներկայացրեց իշխան Պօտեհոմկինին, նա էլ կայս-

ըռւհուն, որ յանձնեց նախարարութեանը՝ մշտկելու կամ նորը խմբագրելու:

Արդպէս էլ եղաւ:

Եւ նախարարութիւնը յիշեալ դաշնագիրը նոր խմբագրութեամբ կազմեց, աւելացնելով և երկու յօդւած, որով ամբողջը բաղկացած եղաւ
20 յօդւածից:

Ահա և այդ դաշնագիրը:

ԺԹ.

Ա.) Հայերի նախարարութիւնը հրովարտակով է լինելու և հայերից՝ համաձայն նրանց օրէնքներին:

Բ.) Նախարարը բուն հայ ազգից և նրա ժառանգութիւնից ու նրա եկեղեցու դաւանութիւնից պէտք է լինի:

Գ.) Ռուսաց կայսերութեան զօրքից 2000 ձիւառը, 2000 հետիոտն և 2000 թնդանօթաձիգի իրենց ամեն պատրաստութեամբ և գործիքներով ու կերակրեղնով—քսան տարի ժամանակաւ մնալու են կայսերական ծախքով՝ Հայաստանում, այդ երկիրը և հայ ազգը պահպանելու համար:

Դ.) Բոլոր բերգերը և զինարանները ռուսաց սպարապետի հրամանի ներքոյ են լինելու, քանի որ նրանք Հայաստանումն են լինելու:

Ե.) Հայերը ռուսաց կայսրութեանը պիտի վճարեն 6000 զինւորների և նրանց պետերի պահպանութեան համար՝ իւրաքանչիւր տարի

60,000 թուման, որից 30,000-ը ոսկի և արծաթէ լինելու, իսկ մնացեալ 30,000-ը՝ հաց, միս և գինի:

Զ.) Վերոյիշեալ 6000 զօրքի դարձը Հայաստանից գէպի հայսրութիւնը այս ձեռվէ կատարւելու: Տասը տարուց յետոյ՝ 2000 հոգին կը դառնան, տասնենինդ տարուց յետոյ՝ 2000 հոգին, իսկ քսան տարուց յետոյ էլ մնացորդ 2000 հոգին: Դարձողները լինելու են ամեն տեսակի և կարգի զինւորներից ե որոշեալ չափով: Դարձող զինւորների թւի հաշւի համեմատ էլ պէտք է պակասի հայերից ստացւելիք հարկը՝ իւրաքանչիւր 2000 հոգու համար 20,000 թուման ի տարին:

Է.) Քսան տարին լրանալուց յետոյ՝ եթէ կայսրութեանը հասանելի գումարը ամբողջապէս տրւած չլինի, մնացածը անժխտելի պարտք կը մնայ հայոց վրայ, որոնք պարտաւոր են այդ մնացորդը կայսերական գանձարանին հասցնել տասնուվեց տարւայ միջոցում՝ ամեն մի տարումը պարտքի մէկ տասներորդ մասը վճարելով առանց շահի:

Ը.) Ամեն մի տարին մի անգամ հայերը ռուսաց կայսեր ընծայ տան ի նշան իրենց հնագանդութեան՝ քսան մողալ զուտ ոսկի, երեք ձի և վեց խոյ:

Թ.) Հայերը ռուսաց կայսերութիւնը պէտք է ընդունեն իրեկ իրենց ազատիչ գերութիւնից, և ռուսների բարեկամների հետ՝ բարեկամ են լի-

նելու և թշնամիների հետ՝ թշնամի։ Ինքը մեծ կայսրն է՝ հայերի բարեկամներին պէտք է սիրէ, իսկ թշնամիներին՝ ատէ։

ԺԴ) Եթէ կայսրութիւնից հրաման դուրս գայ, որ հայերը զօրք տան, — նրանք պարտաւոր են մինչև 6000 զինւոր տալ նրանց ծախքը կայսրութիւնից ստանալով։ Եւ եթէ հայոց զօրք հարկաւորւի՝ կայսրութիւնը տալու է սոյն դաշնազրի և յօդւածի համաձայն։

ԺԱ) Կայսեր հովանաւորութեան տակ դրանւած ամեն մի աստիճանաւոր և զինւոր՝ պատւոր պէտք է լինի հայոց մէջ և նրանց երկրում։ Նոյնպէս և ոռւմների մէջ գանւած ամեն մի հայ աստիճանաւոր և զինւոր պատւոր պէտք է լինի ոռւմների մէջ։

ԺԲ) Ռուսաց Աստուածպաշտութեան կարգը հայերը պէտք է պատւեն և ամեն բան պաշտեն իրենց սովորութեան համաձայն և իրենց եկեղեցում։ Նոյնպէս պէտք է վարւեն և ոռւմները։

ԺԳ) Ռուսաստանի արհեստաւորներն ու վաճառականները ազատ ու արձակ մուտ ու ելք կարող են ունենալ Հայաստանում՝ վճարելով իրենց վաճառքների և ձեռագործների համար հարկ, մաքս, ինչ որ հայերը կը սահմանեն իրենց սովորութեան և կերպի համաձայն։ Նմանազէս և հայերը անարգել և աներկիւղ կարող են մուտ ու ել գործել ոռւսաց աշխարհը՝ վճարելով իրենց վաճառքների և ձեռնագործների համար հարկ, մա-

քըս, ինչ որ ոռւսները կը սահմաննեն իրենց սովորութեան և կերպի համաձայն։

ԺԴ) Ռուսաստանից Հայաստան և Հայաստանից Ռուսաստան քրէական մեղապարտ փախստականները իրենց կեանքի ապահովութիւն պիտի վայելեն։ Բայց պատից կամ պաշտօնից զրկւածները և կամ ոսկու և արծաթի պարտապանները պիտի դատւին այն աշխարհի օրէնքով, որտեղ որ գտնւում են։ Իսկ եթէ փախստականը եկեղեցական անձն է, — նրան պէտք է իրեն առաջնորդին վերագարձնել։

ԺԵ) Հայոց տունը պիտի կառավարէ իր աշխարհն ու ազգը հայոց օրէնքով։ Իսկ եթէ այդ օրէնքներով չնախատեսնեած մի զիպւած կամ մի այլ բան պատահեցաւ, — նոյն օրէնքների արամագրութեան համեմատութեամբ պէտք է ընթանալ։

ԺԶ) Ռուսաց կայսրութիւնը հայոց տունը պէտք է ձանաչէ իրու Հայաստանի թագաւոր և նրա մեծ զեսպանը՝ իրու հայոց բերան, բնակւելու է Պետերբուրգում։

ԺԷ) Որովհետեւ Աղւաններն ու Վրացիները, իրու լաւ հարեաններ, հին ժամանակներից ի վեր հայերի հետ միասին են եղել և այժմ էլ միմեանց հետ շատ սիրով են, ուստի Հայաստանում գտնւելի 6000 ոռւս զօրքն, հարկաւոր ժամանակ կարող են օգնել և Աղւաններին ու Վրացիներին՝ որքան որ կարող կը լինին։

ԺԸ) Ռուսաց 6000 զօրքի պահպանութեան

համար սահմանւած տարեկան ծախքի ապահովութեան համար հայոց աշխարհի բոլոր եկամուտների տասը մասին չորս մասը՝ պէտք է ոռւսաց մօտ դրաւ դրւած լինի։ Մնացեալ մասից չորս մասն էլ հայոց հայրապետին պիտի տրւի կրօնաւորների ծախքերի համար, անանկների, աղքատների համար, վանօրէից նորոգութեան և ուրիշ պէտքերի համար։ Իսկ մնացեալ երկու մասը՝ ընդհանուր գանձարանը պէտք է մտնի։

ԺԹ) Փողերը պէտք է հատուցւին տարւայ մէջ չորս եղանակում, այսինքն մարտի 20-ին, յունիսի 20-ին, սեպտեմբերի 20-ին և դեկտեմբերի 20-ին։

Եթէ որևէ սխալմունք, «յանդիմանութիւնք կամ զանգանութիւնք» պատճի հայոց և ոռւսաց մէջ, որոց մէջ խոռվութիւնը բոլորովին արգելւած է և վրէժխնդրութիւնը փակւած — այն դէպքում երկու կողմն էլ պարտաւոր են իրենց զանգատներն ու պատասխանները ներկայացնել ամենայն փառաց արժանի Հռովմայ, այսինքն Գերմանիոյ կայսեր, և նրա տւած վճիռն երկու կողմի համար էլ արդար և պարտադիր պէտք է ճանանչէի*):

Ընթերցողը պարզ տեսնում է Յովսէփ արքեպիսկոպոսի խմբագրած և ոռւս նախարարութեան խմբագրած այս դաշնագրերի մէջ եղած տարբերութիւնը։

*) Դիւան Հ. պատմ. զիրք Դ. եր. 731—734։

Ինչ էլ որ լինի, ոչ Յովսէփ Արհւոյն և ոչ էլ նախարարութեան դաշնագրերին վիճակւած չէր իրականանալու։

Որովհետեւ ոռւսատաճկական երկրորդ պատերազմը համարեա թէ վերջացել էր, երբ իշխան Պօտեօմկինը 1791-ին Պետերբուրգ գնաց և աշնան սկզբումը մեռաւ, ի մեծ ցաւ Ռուսաստանի և ի մասնաւորի Հայոց։

«Յովսէփ Արդութեանը երեխայի պէս հեկեկում էր. երկու անգամ կամեցաւ նա հոգեհանգիստ կատարել իշխանի համար և չկարողացաւ վերջացնել, ամեն անգամ թուլացած դուրս էին բերում եկեղեցուց։

«Պօտեօմկինի մահւամբ Յովսէփ արքեպիսկոպոսի բոլոր յոյսերը ի գերեւ ելան, նրա բոլոր մտադրութիւնը քանդւեց։ «Այժմ Հայաստանը կրկին որբացաւ, — գրում էր նա, — մեր բարերարն էլ չկայ։ Կործանւեցաւ այն հսկայական շէնքը, որի հովանու ներքեւ ես այնչափ աշխատել էի և որ այժմ թերի մնաց, բոլորը, բոլորը փուչ դուրս եկաւ։ Այդ շէնքի աւերակների տակ թաղւեցան ոչ միայն իմ ցնորդներս, այլեւ նրանց բոլորինը, որոնի ինձանից աւելի խելօֆ են...*) ես կարողութիւն չունիմ նոր հիմք ձգել... Բոլոր իմ յոյս բարեպաշտ կայսրունու վրայ է։**)

*) Ընդգծումները իմն են։

**) «Արձագանք» 1877-78, № 1, եր. 385։

ԺԵ

Հանգուցեալ Պօտեօմկին իշխանին յաջորդեց իշխան Պլատօն Ալէքսանդրովիչ Զուբովը, որ կայսրուհու մտերիմն էր նոյնպէս։ Սա թէպէտ ոչ իր նախորդի աազանդն ունէր, ոչ նրա էնէրդիան ու փորձառութիւնը, բայց նաև աւելի փառասէր էր։ Ուստի և քաղաքական մի այնպիսի ծրագիր կազմեց, որ յանդգնութեամբ և անիրազործելիութեամբ՝ իր ետին էր թողնում «յունական ծրագիրը»։

Պլատօն Զուբովի ծրագիրը այն էր, որ իր եղբայր Վալերիան Զուբովը, Խուսաստանի և Հնդկաստանի մէջ ճանապարհ բաց անելու համար՝ զնայ և տիրէ Պարսկաստանի և Տիբէթի մէջ եղած բոլոր գլխաւոր կէտերը։ Յետոյ այդ կէտերում պահակներ թողնելով՝ ինքը անցնի Անատօլիա և տիրելով Անատօլիայն՝ Կ. Պոլիս տանող բոլոր ճանապարհները գոցէ։ Դրանից յետոյ՝ Սուվորովը Պարսկաների և Ադրիանապօլի վրայով երեայ Կ. Պոլիսի վրայ։ Այդ միջոցին կայսրուհին, որ այդ նաւատորմիզի վրայ էր գտնելու, ծովից կը պաշարէ այդ քաղաքը։

Սակայն նախ քան այս ծրագրի իրագործմանը ձեռնարկելիս՝ նախապէս դեռ պէտք էր Պարսկաստանի վրայ արշաւել։ Այդ արշաւանքը յանձնւեցաւ Վալերիան Զուբովին, որ և 1796 թ. փետրվարին գլխաւոր հրամանատար կարգւեցաւ։

ԺԶ

Վալերիան Զուբովի գլխաւոր ոյժը պէտք է ուղւէր դէպի կասպից ծովի ափաւնքը։

Այդ ծրագրի կողմն էր և Յովոէփի արքեպիսկոպոսը, որ 1795 թ. դեկտեմբերի 15-ին գըրում է Ստեփան Դաւթեանին, որ, ինչպէս գիտենք, Զուբովի մօտն էր գտնւում, իբրև «Արքատեան գեոպան»։

«Եթէ ոռւսաց բանակը, -- գրում է Արհին, -- միմիայն Թիֆլիզի վրայ երթայ, դրանից ոչնչչի գուրս գալ, եթէ ոչ աւերւած քաղաքի տիրապետութիւնը։ Իսկ եթէ զօրքը գնայ Դարբանդի, Բագրի և Գանձակի վրայ, -- յայն դէպս հեշտութեամբ կտիրէ Շէքիին (Նուխիին) և Շիրվանին (Շամախիին) և ապա Գանձակին։ Այստեղից զօրքը կօգնէ Երևանի հայերին և միւսներին։

«Եթէ մինչև այդ ժամանակը Շուշայ խանը ից բերգից հեռացած չի լինիլ, -- անշուշտ նակմիանայ մերոնց հետ և ներքինու (Աղա Մահմադ խանի) իշխանութեանը վերջ կտրւի։

«Իմ ձեռքի տակ եղած փաստերի հիման վրայ, -- շարունակում է Յովոէփի Արհին, -- ես նախադիծ կազմելով Վրաստանի և Հայաստանի մասին, ներկայացրի Պլատօն Զուբովին իմ կարծիքի հետ միասին»։

Բարձրից իրեն տւած հրահանգի զօրութեամբ՝ Պլատօն Զուբովը պէտք է Հերակլին վե-

բահաստատէր իր իշխանութեան մէջ վրաստանում. հայոց մելիքներին՝ իրենց ժողովրդի հետ միասին՝ ենթարկէր բացառապէս Ռուսաստանի հովանաւորութեանը, իսկ էջմիածնի կաթողիկոսին անպատճառ դէպի ռուսաց կողմը զրաւէր:

«Այսպիսով միայն ասւած է հրահանգի մէջ, —կարելի կլինի տարածել և ամրացնել մեր իշխանութիւնն ու ազգեցութիւնը քրիստոնեաների վրայ»:

ԺԷ

Իր այս հրահանգից յետոյ էր, որ Պլատոն Զուբովը ստացաւ Յովսէփի արքեպիսկոպոսի վերոյիշեալ նախագիծը վրաստանի և Հայաստանի մասին։ Եւ կայսրունու հետ այդ նախագծի առթիւ խորհրդակցելուց յետոյ՝ 1796 թ. փետր. 19-ին № 16 գրութեամբ, զիմեց Յովսէփ Արհեոյն խնդրելով, որ նեղութիւն կրէ և գնայ Մօղդօկ Վալերիան Զուբովի մօտ և իր ընդառձակ տեղեկութիւններին ու խորհուրդներին մասնակից անէ նրան։

Արհին գնաց տեսնւեցաւ Վ. Զուբովի հետ, հաղորդեց նրան ինչ որ պէտք էր, նա էլ «յոյս ժեց մեր ազգի օգսին և ապագայի մասին»։

Ալդ յուսով ոգեսորւած՝ Յովսէփի Արհին վերադաւ Աժդարիսան։ Բայց քիչ ժամանակից յետոյ՝ Վալերիան Զուբովը 1796 թ. հոկտ. 26-ին № 458 գրութեամբ՝ հրաւիրեց նրան «նեղու

թիւն կրել» և գնայ Միմսկի-Գորսակով գեներալի զօրաբանակը «իբրի բարի հովիւ, որ իր հօտին դալար վայրերում կարածացնէ»։ Եւ այնտեղից (զօրաբանակից) հայցել և ձեռք բերել Արարատեան (էջմիածնի) կաթողիկոսի սուրբ օքնութիւնը ռուս բանակի առաջիկայ գործողոթիւնների համար։

«Այդ առթիւ, —շարունակում է ռուս զօրքի հրամանատարը, —ես նորին Սրբութեանը մի յատուկ նամակ էլ եմ զրել և յանձնել գեներալ Գօրսակովին, որ անձամբ անձին տանի և նորին Սրբութեանը մատուցանէ»։

Անկախ էջմիածնի կաթողիկոսին ուղղած նամակից, Վալերիան Զուբովը մի հրահանգն էր տւել Գօրսակովին, ուր ասում էր՝ «թէս մեր ուղղափառ կրօնը պահանջում էր, որ Պարսկաստան մանելով անմիջապէս ձեռնարկէի մահմեղականների լծի տակ եղած քրիստոնեաններին ազատելու, սակայն մահմեղականներին քննցնելու նպատակով՝ երեսանց շատ անտարիւր զժնւեցայ դէպի յրիսունեաները, որպէսզի նախ՝ մահմեղականներին գրգռած լինելով քրիստոնեանների դէմ՝ իմ նպատակի իրագործման հանդէպ խոչընդունակ հանած չլինեմ։ Խորհուրդ եմ տալիս, որ գուք միենոյն այս ճանապարհով ընթանաք։ Զեր գործն այնպէս առաջ տարէք, որ մահմեղականները մեղանից կամկածելով՝ մեղնից խրտնելու, կամ մեզ հակառակելու առիթները չունենան։ Եւ միւս կողմից՝ քրիստոնեանները մեզ վրայ

ունեցած վստահութիւնն ու հաւատը չկորցնեն,
մեղանից չսառչեն:

«Եյս երկու միմեանց հակառակ ծայրերը
միմեանց հետ հաշտեցնելու մեծապէս ձեզ կարող
է գաղանօրէն օդնել հայոց Յովսէփ արքեպիս-
կոպոսը, որի միջոցաւ դուք ամեն կերպ աշխա-
տեցէք, որ իջմիածնի կաթողիկոսը չկորցնէ այն
վստահութիւնը, որ սկսել է ունենալ մեզ վրայ».

ԺԼ

Գրւածքիս Զ. հատւածում համառօտակի
յիշել էի, թէ Վալերիան Զուբովի ներկայ արշա-
ւանքի ժամանակ ինչ ու քանի տեսակ ծառայ-
ութիւններ արաւ Յովսէփ արքեպիսկոպոս Արդու-
թեանը ոռւսաց բանակին, և որքան դիւրացուց
Զուբովի գործն՝ առանց արիւնահեղութեան տի-
րելու միքանի խանութիւնների և խաներին ոռւս
կառավարութեանը հպատակեցնելու:

Յովսէփ Արհեոյ այդ տեսակ գործունէու-
թեան արդիւնքն էր նաև այն, որ Ղարաբաղի մե-
լիքներն՝ հայազգի Կաճկաճեկ պաշտօնէի ներկայ-
ութեամբ՝ հաւատարմութեան երդում կերան և
յանձն առան, թէ հէնց որ «ոռւս զօրքը կուր
դետի ափին երևաց, մելիքներն իրենց զէնքով
ոռւսներին օդնեն, այլ նաև նրանց համար պա-
շար և այլ անհրաժեշտ պիտոյքներն հոգան ու
լրացնեն:

Բայց երբ այս ամենը կազմ ու պատրաստ
էր և ահա 1796 թ. նոյեմբերին Եկատերի-
նա կայսրուհին մեռաւ և նրան յաջորդեց Պաւէլը:

Սա գահ բարձրանալիս իր առաջին գործն
արաւ պարսիկների դէմ պատերազմը գաղարեց-
նել և Պարսկաստանից ոռւս բանակը յետ քաշել:

ԺԹ

Ինքն ըստ ինքեան հասկանալի է թէ ոռւ-
սաց զօրքի հեռանալը՝ ինչ անելաննելի վիճակի
մէջ դրեց հայերին, որոնք շարունակ օգնում էին
ոռւսներին: Եւ հէնց այդ պատճառաւ էլ ստիպ-
ւած էին այժմ զոհ դառնալ նրանց վրէժինդ-
րութեանը:

Առաջին զոհերը եղան ի հարկէ մելիքները,
որոնց իբրահիմ խանը սկսեց նորից խոշտանգել
ու բանտարկել, նորից նրանց մնացած կալւած-
ները խել և իր մարդիկներին նւիրել: Ապա Իբ-
րահիմ խանը դարձաւ դէպի մելիքների կուսակից
հոգեորականներին ու աշխարհականներին և վերջ
ի վերջոյ դէպի հասարակ ժողովուրդին:

Ղարաբաղի հայերի անտանելի վիճակի ար-
ձագանքը մինչեւ իսկ հեռաւոր Դարբանդին և
առհասարակ կասպից ծովի ափում գտնւած հա-
յերին ևս հասաւ, որքան իրենց գլուխը պրծա-
ցնելու միակ յուսով՝ հէնց ոռւսաց զօրքի հետ
փախան գնացին Ռուսաստան և վերջերում այն-
տեղ և. Խաչ քաղաքը շինեցին:

Պարսից ժողովրդից կրած տառապանքներն
կարծես քիչ լինէին հայերի համար, և ահա բնու-
թիւնն ևս ձեռնարկեց պատժելու և աւելի ահա-
ւոր չափով:

Միմեանց յաջորդող երաշտը, սովը և 1798 թւականի ահաւոր ժանտախտը՝ շատ մեծ քանակութեամբ զոհեր տարաւ հայ ժողովրդից։ Կենդանի մնացած հայերն էլ՝ լեղաճաք, լեղապատառ ցաք ու ցրիւ եղան ամեն տեղ, ուր որ աչքերը տեսնում էր և ուր որ ոտքերը հասնում։

Ղարաբաղը ամայոցաւ հայերից։ Նա այժմ զուտ պարսկական երկիր գարձաւ և պարսիկ ժողով ու պարսիկ իշխողով։

Գալով հայոց մելիքներին, Ղարաբաղի այդ խոկական, օրինական տէրերին, — նրանցից մեռնողները՝ մեռան, իսկ կենդանի մնացածները էլ ճիշտ այն օրին էին հասել, ինչ օրին որ հասել էր՝ երբեմն հարուստ, սեփական, կառքով շրջող հարուստ կինը, ժամի դռնում կագնելով և կողկողագին ձայնելով։

«Ողորմութիւն արէք, պարոն,
Անառն, անտէր աղքատին»։

Նրանք, — Ղարաբաղի այդ մելիքներն այժմ վրաց արքունիքի գոներն էին բաղխում և մեծ ճիգ ու ջանք թափում, որպէսզի վրաստանում մի անկիւն տրւի իրենց և իրենց ժողովրդին պատապարւելու համար։

Սակայն վրաստանում մի անկիւն գտնելու համար էլ անհրաժեշտ էր նախապէս Ռուսաստանի բարեհաճութիւնն ու թոյլտութիւնը ստանալ։

Եւ ահա նորից ասպարէզ է գալիս Յովսէփ արքեպիսկոպոս Արդութեանը իր նոր, և արդէն երրորդ ծրագրով։

ի

Յովսէփ Արհւոյ առաջին ծրագիրն էր, ինչպէս զիտենք, իշխան Պր. Պօտեօմկինի միջոցաւ Հայաստանում մի անկախ հայկական իշխանութիւն կանգնել։

Պօտեօմկինի մահուամբ այդ ծրագիրը ևս մեռաւ։

Երկրորդ ծրագիրն էր՝ իշխան Պլատոն Զուբովի միջոցաւ՝ վրաց և հայոց միացեալ մի անկախ իշխանութիւն կազմել։

Եկատերինայի մահուամբ այս ծրագիրն ևս ջուբն ընկաւ։

Յովսէփ Արհին այժմ, Պաւէլ կայսեր օրով, մաքումը դրեց մի «փոքրիկ Հայաստան կազմել Ռուսաստանի մէջ»։

Եւ դրա համար էլ՝ Արհւոյ խորհրդովն ու թախտնձանքով հայ մելիքներին ու իւզբաշիները և նոյնիսկ Պուկաս կաթողիկոսը մի շնորհաւորական ուղերձ գրեցին Պաւէլ կայսրին՝ նրա դահակալութեան առթիւ։

Ի պատասխանի հայոց այս ուղերձին՝ Պաւէլ կայսրը 1798 թ. փետրւարի 26-ին հրավարակ ուղարկեց, որով «իր բարեհաճութիւնն էր յայտնում ամբողջ հայ ազգին և խոստանում էր ուշադրութիւն դարձնել նրա վիճակի վրալ»։

Այդ պատճառաւ Պաւէլ կայսեր հրավարակը ստացւելուց յետոյ՝ ի պատասխան հայերի ուղերձին՝ Յովսէփ արքեպիսկոպոսը վերջիններիս (հայերին) դարձաւ մի այլ խորհրդով, — թող մե-

Արքների կողմից մի պատգամաւորութիւն դայ
Պետերբուրգ և կայսեր ներկայանալով՝ անձամբ
անձին իր ցաւերն ու դաշտերը պատմելով՝ նրանից
շնորհ ու ողորմութիւն հայցէ:

Արդութեանի այս յորդոր ու խորհրդին էլ
անսացին հայերը և պատգամաւորութիւնը, յան-
ձին Վարանդայի մելիք Զումշուտի և Գուլիստա-
նի մելիք Փրիդոնի, մեկնեցաւ Պետերբուրգ:

ԻԱ

Պետերբուրգում Յովսէփ արքեպիսկոպոսը
պատգամաւորների համար մի խնդիր զրել տւեց
և նրանց ստորագրել տալուց յետոյ՝ առաջարկեց
անձամբ կայսրին մատուցանելու:

Խնդրի մէջ մելիքները մի առ մի նկարա-
դրում են իրենց նախնիքների և իրենց կրած
տառապանքներն պարսից կառավարութիւնից՝
յատկապէս սուսաց կողմը իրենց հակւած լինելու
պատճառաւ:

Պատմում են, թէ ինչպէս իրբահիմ խանը և
Աղա Մահմադ խանը իրենց կայքերն ու գոյքերը
քարուքանդ են արել, փչացրել, ինչ և որքան
խոշտանգանք են հասցըրել իրենց, իրենց ընտա-
նիքին և իրենց հպատակ ժողովրդին, թէ ինչպէս
ցեծամեծ կաշառներ տալով՝ հազիւ հազ կարողա-
ցել են իրենց անձը մահւանից փրկել:

Վերջ ամենայնի հայ մելիքները խնդրում են՝
ա) Ղարաբաղը ընդունելով սուսական գահի
հովանոյն տակ, ճանաչել նրան սեփական ժա-
ռանդութիւն հայ մելիքներին, այլ ոչ իրբահիմ

խանին: Յարգելով այս խնդիրը՝ կայսրը հասրա-
ւորութիւն կը տայ Ղարաբաղից ցրւած հայերին
վերադառնալ և վերականգնել ու շէնացնել իրենց
հայրենիքը:

բ) Եթէ կայսրը այս խնդիրը չէ ուզում յար-
գել, — ապա մելիքները նրանից 12,000 զօրք են
խնդրում, որպէսզի նրանց հովանաւորութեամբ
կարողանան ցրւած հայերին հաւաքել և նրանց
հետ միասին գաղթել Ռուսաստան և Եկատերի-
նօգարի մօտ հայկական մի նոր գաղութ հասա-
տելու, — մի նոր և «վիոյր Հայաստան Ռուսաս-
տանի մէջ»:

գ) Եթէ կայսրը այս խնդիրը ևս չյարգէ, —
մելիքները խնդրում են, որ նա բարեհաճի պատ-
ւիրել վրաց թագաւորին, որ սա հայերի համար
տեղ տայ Ղազախ գաւառը (Գուգարք), որտեղ հաս-
տառելով՝ հայերը միենոյն ժամանակ Վրաստա-
նի սահմանները կպաշտպանեն յարձակումներից:

ԻԲ

Հայոց մելիքների այս «ամենախոնարհագոյն»
— առողջութեամբ կայսերին ի պատասխանի՝ Պաւէլ
կայսրը 1799-ին յունիսի 2-ին հրովարտակաւ
պատիրեց վրաց թագաւորին, որ եթէ Ղազախ
գաւառը բռնած լէ, — ապա տալ մելիքներին, որ
իրենց ժողովրդով այստեղ ընակւելով՝ Վրաստա-
նի սահմանները պաշտպանեն:

Պաւէլ կայսեր վերոյիշեալ հրովարտակից մի-
քանի ամիս անցած՝ էջմիածնում վախճանւեցաւ
Ղուկաս կաթողիկոսը և նրան յաջորդ ընտրւեցաւ,

—ոռւս կառավարութեան շատ ներդործօն միջա-
մտութեամբ, — Յովսէփ արքեպիսկոպոս Արդու-
թեանը, որին Արարատեան համազգային Մայր
Աթոռի վրայ նստացնելով՝ ոռւս կառավարութիւնը
քաղաքական նորանոր ակնկալութիւններ ունէր
հայերից: Ինքը՝ Յովսէփ Արհին էլ՝ տակաւին յոյս
ունէր, որ ոռւս կառավարութիւնը իր խոստումը
հայերի անկախութեան մասին՝ վերջի վերջոյն կը
կատարէ: Ուստի և անձնական փառքից աւելի թե-
րես ազգային փառքի համար՝ նա ինքն էլ ամեն
կերպ աշխատեց կառավարութեան այդ նպատակի
իրագործմանը ևս, այն է՝ իր կաթողիկոսացմանը:

Եւ սրպէսզի Արդութեանի կաթողիկոսաց-
մանը աւելի շուշ տրւած լինի՝ ոռւս կառավարու-
թեան ներկայացուցիչը՝ Վրաստանում—գեներալ
Գնօրինդը ինքը անձամբ մինչև Մօղգոկ դիմաւո-
րելու գնաց կաթողիկոսին: Բացի դրանից՝ Կով-
կասեան լեռնականներից պատանդներ վերցւե-
ցան, որպէսզի կաթողիկոսը լեռնաշղթան ապահո-
վաբար անցնի:

Իսկ կաթողիկոսի մուտքը Թիֆլիզում ընդ-
հանուր զանգակահարութեամբ և 101 անդամ ար-
ձակւած թնդանօթների որոտումներով յայտարար-
ւեցաւ ժողովրդին:

Սակայն «խորհուրդ մարդկան, կամք Աստու-
ծոյ»: Յովսէփի կաթողիկոսին վիճակւած չէր օծւել
և հայրապետական գահի վրայ բազմիլ:

Թիֆլիզ նու բաղնիսից դուրս զալիս մրաեցաւ
և միքանի օրւայ հիւանդութիւնից յետոյ մեռաւ:

Եւ նրա մահւամբ՝ «Հայկական հարցի» եր-
բորդ շրջանն ևս վերջացաւ:



ՀԵՂԻՆԱԿԻ ԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ



- | | |
|--|--|
| <p>1. Զէնիաթ—դէնիաթ
 2. Գլխագին
 3. Ապօրինի զաւակը
 4. Գինեգին
 5. Ռաֆֆի «Կայծերը»
 6. Կացինը քարին կպաւ
 7. Մտորումներ
 8. Պատմական Քաղւածներ Ա. պրակ.</p> <p>9. " " Բ. "
 10. " " Գ. "
 11. " " Դ. "
 12. " " Ե. "
 13. " " Զ. "
 14. " " Է. "
 15. Խորայէլ Օրին և իր քաղաքական ծրագիրը</p> | <p>Ա կ ա մ ս ո ւ ն ե ր
Ծ ռ ա մ ս ո ւ ն ե ր
Ո ւ ն ե ր
Ե ր ա մ ս ո ւ ն ե ր
Զ ա յ ա կ ա ն ի ն ե ր
Հ ա ր ա յ ի ն ե ր
Հ ա յ կ ա կ ա ն ի ն ե ր</p> |
| <p>16. Հայկական հարցի երկրորդ շրջանը
 17. Հայկական հարցի երրորդ շրջանը</p> | <p>60 դ.</p> |

Դիմել Եակу, Պրոտօեր. Եցիշէ Գեգամյանց.

